№ 65 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 26 ՄԱՐՏԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 26 ՄԱՐՏԻ № 65

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 9 ՌՈՒԲ.
Ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը—85 կ.: Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԷՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:
1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրձինի:
ՊԱՌՈՒԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՀԱՒԼԱԲԱՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ
Չորեքշաբթի, մարտի 26-ին
ՅՕԳՈՒՏ ՇԱՄՔՈՐԵՑՈՑ (ԿԱՐՄԻՐ ԱՒԵՏԱՐԱՆ) ՄԽ. ԴՊ. ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ
Հայ Դրամատիկական խմբի դերասանների և սիրողների մասնակցութեամբ կը տրվի
Գորդինի յայտնի
ՄԻՐՐԱ ԷՖՐՈՍ
Դրամա, 4 գործ. 5 պատկեր:
Մասնակցում են՝ տ. տ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆ, Զաբէլ, Մանուչարեան, Ճէպէյեան, պ. պ. Մամիկոնեան, Ղազարեան, Մարութեան և ուրիշներ:
Տեղերի գները 2 ր. 10 կ.-ից մինչև 50 կ.: Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Հաւլաբարի Սպառողական Ընկերութեան խանութում և ակումբում:
Կարգադրիչ՝ Ա. ՍՏԱՄԲՕԼՑԵԱՆ ✦ Ռեժիսսեօր՝ տիկ. Օ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆ
տռ. 268. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Այսօր, չորեքշաբթի, մարտի 26-ին տեղի կունենայ ժուռնալիստ
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԼԱԳՕԼԵՎԻ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ
ՖՈՒՏՈՒՐԻԶՄԻ մասին:
Սկիզբը երեկ. ժամը $8^1/_2$-ին:
Տոմսակները 20—50 կ.:
Կարող է ներկայ լինել բարձր դասարանների աշակերտութիւնը՝ ներկայացնելով թոյլտուութեան թուղթ դպրոցական վարչութեան կողմից:
Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կոպ.:
տռ. 275 1—1

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
Չորեքշաբթի, մարտի 26-ին, բարեհաճ մասնակցութեամբ դաշնակահարուհիներ օր. օր. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ, ԲԱԲԱԼԵԱՆԻ, դերասանուհի օր. ԽԻԹԱՐԵԱՆԻ, արտիստ ՎԱԼԵՐԻԱՆՕՎԻ, ջութակահար ՎՐՈՑՐԻ նուագակցութեամբ լարախմբի, պ. ՔԱՓԱՆԱԿԵԱՆԻ, ՎԱԼԱԴԵԱՆԻ և պ. ԿԱՑԵԱՆԻ
կը կայանայ
ՀԱՄԵՐԳ
ճոխ ծրագրով: Մանրամասնութիւնը պրոգրամմայով: Սկիզբը $8^1/_2$ ժամին երեկոյեան. Տոմսակները կարելի է ստանալ Ընկ. շվէյցարի մօտ:
տռ. (տ. օ.) 278. 2—2

ԿՈՄԵԴԻԱՆ ՎԵՐՍԿՍՎՈՒՄ Է

—

Քիւրդերի խլրտումները, ապստամբութիւնը Բիթլիսի շրջանում անմիջապէս րէֆօրմների ծրագիրը հրատարակվելուց յետոյ, ոչ մի կասկած չեն թողնում, որ Թիւրքաց կառավարութեան կամ Աբդիւլ-Համիդի րէժիմի նախկին կոմեդիան վերսկսվում է։

Ամեն անգամ, երբ եւրոպական մեծ պետութիւնները առաջ էին մղում Հայաստանում մտցնվելի րէֆօրմների որևէ ծրագիր, քիւրդերը շարժվում էին և Թիւրքաց նենգամիտ կառավարութիւնը յայտարարում էր. «Մենք անկեղծօրէն ցանկանում ենք րէֆօրմներ մտցնել, բայց մուսուլման ժողովուրդը, քիւրդերը սաստիկ յուզվում են և պատրաստ են ապստամբվելու»։

Նոյն անարժան կոմեդիան վերսկսվում է այսօր երիտասարդ-թիւրքական կառավարութեան ձեռքով։

Ձեռքի տակից քիւրդերին ներշնչում են, թէ րէֆօրմների գործադրութիւնը կը նուազեցնէ իրանց ազդեցութիւնը, այսինքն րէֆօրմների շնորհիւ այլ ևս քիւրդերը հնարաւորութիւն չեն ունենայ ասպատակել, թալանել, կողոպտել խաղաղ ազգաբնակութիւնը և ձեռքի տակից քիւրդերին խրախուսում են, թողնելով նրանց սպառազինված, իսկ հայերին զինաթափ անելով, և երբ քիւրդերը ոտքի են կանգնում, անկասկած կառավարչական զօրքերը նահանջում են և ապա նենգամիտ կառավարութիւնը յայտարարում է, թէ քիւրդական շարժումը հայերի դէմ չէ, այլ կառավարութեան։

Եւ այդ անում է այն կառավարութիւնը, որը, երբ մի քիւրդ է սպանվում մի հայ գիւղի մօտ, գտնում է անմիջապէս 1000 զինւոր և ուղարկում գիւղը պաշարելու, բայց երբ ոտքի է կանգնում քիւրդերի մի ամբողջ գրոհ, հազիւ 400 զինւոր է գտնում նրանց դիմադրելու։

Այո, կրկնվում է, վերսկսվում է նախկին կոմեդիան։ Թիւրքաց կառավարութիւնը առ երես համաձայնութիւն տուած լինելով րէֆօրմների ծրագրին—թէև այդ ծրագիրը ամբողջովին խնայում է և պաշտպանում Թիւրքական ինքնատիրութիւնը և սուլթանի վեհապետական իրաւունքները—բայց մտադրութիւն չունենալով գործադրել, դիմում է նախկին անարժան միջոցին. «Ինչ անենք, մենք կամենում ենք գործադրել րէֆօրմները, բայց քիւրդերը և մուսուլմանները հակառակ են»։

Փորձեալին կամ սատանային վերստին փորձելը անմտութիւն է, ասում է առածը։ Եւրոպական պետութիւնները, գլխաւորապէս Ռուսաստանը և Գերմանիան պէտք է համոզվեն, որ Թիւրքերը յօժարակամ րէֆօրմներ չեն մտցնի, այլ պէտք է ստիպել նրանց, կամ պէտք է, որ այդ պետութիւնները իրանց ձեռքն առնեն րէֆօրմների գործադրութիւնը։

Իսկ եթէ քիւրդերի շարժումը անմիջապէս չը զսպվի, եթէ հայկական ջարդեր վերսկսվեն, այդ դէպքում բարոյական և հրամայողական պարտականութիւն է ընկնում Ռուսաստանի վրա, որ րէֆօրմների թելադրիչը և նախաձեռնողն եղաւ, ապահովել հայ ժողովրդի գոյութիւնը՝ գրաւելով Թիւրքաց Հայաստանը։

Այդ է պահանջում Ռուսաստանի պատիւը, պրեստիժը և քրիստոնէական ու մարդասիրական պարտականութիւնը։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—о—

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
24 մարտի

ԴՈՒՐԱՑՑՈ.— Էլբասանից տեղեկացնում են, որ նահանգապետ Ալիֆ-փաշան 2000 ալբանների հետ մտել է Կորիցա։

ՎԻԷՆՆԱ.— Դուրացցոյից տեղեկացնում են լրագիրներին, որ այնտեղ յայտարարութիւններով յորդորվում է 20—30 տարեկան մահմեդականներին և քրիստոնեաներին ժողովվել մի դրօշակի տակ։ Ալբանիայի իշխանը մտադիր է 15,000 զօրաբանակի գլուխ կանգնած մտնել Եպիրոս։ Այդ առիթով «Կոր. Բիւրօյին» հաղորդում են Դուրացցոյից, որ Հարաւային Ալբանիայում տիրող անիշխանութեան պատճառով ալբան կառավարութիւնը կարգադրել է կազմել այն երիտասարդների ցուցակները, որոնք կարող են միլիցիաներ կազմել։ Մասնակի զօրահաւաքի տեղեկութիւնները տակաւին չեն ճշդվում։

ՍԿՕՊԼԷ.—Ալբանների ապստամբութիւնը Պրիզրէնի մօտ բոլորովին ճնշված է։ Պարզվել է, որ ապստամբների թւում եղել են ազատ Ալբանիայից եկած մօտ 80 ալբան։

ՈՒՆԳԱՐԻԱՆ ԵՒ ԵՌԱՊԵՏԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
24 մարտի

ՎԻԷՆՆԱ.—«Ն. Ֆ.-Պրեսսէին» հաղորդում են Բուդապեշտից, որ այն շարժումը, որ յարուցել են մասամբ ունգարական օպպօզիցիօն կուսակցութիւնները երրեակ դաշնակցութեան դէմ և յօգուտ երրեակ համաձայնութեան հետ աւելի սերտ մերձենալուն, սկսում է ստանալ անցանկալի ձևեր։ Օպպօզիցիայի շրջաններում միտք կայ ուղարկելու ունգար օպպօզիցիայի անդամներին, պատգամաւորութիւնների նստաշրջանը վերջանալուց յետոյ, Պետերբուրգ, ստանալով հրաւէր ռուսներից։ Օպպօզիցիօն կուսակցութիւնների մի մասը այդօրինակ քայլը համարում է անցանկալի։ Վերջնական վճիռ կը կայանայ երբ, կոմս Կարոլին վերադարձած կը լինի Ամերիկայից։ Միևնոյն ժամանակ յոյս են տածում՝ թէ օպպօզիցիօն կուսակցութիւնների պարագլուխները, որոնք չեն համակրում յօգուտ Ռուսաստանի սկսվող շարժումը, կունենան բաւականին ազդեցութիւն՝ կանգնեցնելու ներքին քաղաքական պատճառների վրա հիմնված շարժումը։

Այնուհետև «Նէյէ-Ֆրէյէ-Պրեսսէին» հաղորդում են Բուդապեշտից, որ օպպօզիցիօն պատգամաւորների Պետերբուրգ գնալու տեղեկութիւնները մեծ դժգոհութիւն են յարուցել Ունգարիայի լուրջ քաղաքական շրջաններում։ Ըստ երևոյթին, օպպօզիցիայի անդամները երկիւղ են կրում, որ ձեռնարկելով այդպիսի համարձակ քայլ, նրանք բոլորովին կը կորցնեն Ունգարիայի հասարակական կարծիքի համակրութիւնը։ Ուստի այն կարծիքն է յայտնվում, թէ Կարոլին մտադիր է Պետերբուրգ մեկնել իբր թէ Սազարիին այցելելու համար։ Չը նայած հերքման, այն տպաւորութիւնն է տիրում, որ ագիտացիան ղեկավարող օպպօզիցիօն քաղաքագէտները Կարոլի ճանապարհորդութեան հետ կապում են որոշ քաղաքական մտադրութիւններ։ Շարժումը բարձրացրած խմբակը սակաւաթիւ է։ Օպպօզիցիայի լուրջ քաղաքական գործիչները համոզված են, որ ագիտացիան տեղին չէ և անմիջապէս սպառնում է միապետութեան շահերին առ հասարակ և Ունգարիային՝ մասնաւորապէս։

«Ցէյտին» հեռագրում են Բուդապեշտից. «Այն լուրերը, թէ իբր օպպօզիցիայի մօտ 30 պատգամաւոր այցելելու են Պետերբուրգ և ներկայ են լինելու Պետական Դումայում, իրականութեան չեն համապատասխանում։ Փետրվարին կայացան մի քանի խորհրդակցութիւններ, որոնց ժամանակ միտք արծարծվեց՝ յարաբերութիւն հաստատելու Դումայի և ունգարական պարլամենտի միջև։ Այդ միտքը բղխում է մի ռուս ժուռնալիստից, որ, գործելով Դումայի աչքի ընկնող անդամների յանձնարարութեամբ, մատնանշեց, թէ հնարաւոր է որ ստացվի հրաւէր Պետերբուրգից. սակայն հրաւէր չը ստացվեց։ Այդ հանգամանքը, ինչպէս և օպպօզիցիօն ականաւոր քաղաքագէտների ազդեցութիւնը յանգեցին այն բանին, որ յիշեալ ծրագիրը թողնվեց։ Բայց և այնպէս՝ Պետերբուրգ այցելելու առաջարկութիւնը ապացուցանում է, որ երրեակ դաշնակցութեան դէմ ուղղված շարժումը գոյութիւն ունի մի քանի քաղաքական շրջաններում։ Այդ շարժումը չէ կարելի ոչընչացնել ոչ պաշտօնական հերքումներով, ոչ էլ կառավարական կուսակցութեան անդամների հանաքներով։ Անհրաժեշտ է այդ շարժման վրա դարձնել ամենալուրջ ուշադրութիւն»։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետ. Հեռ. Գործ.)
24 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Այսօր աշխատանքները վերսկսվեցին նոր և հին Լէսների, Լիւդվիգ Նօբէլի, Պետերբուրգի մետաղաձուլիչ ու մեքենաշինարարական, «Ֆէնիկս» և մի քանի մանր գործարաններում։ Մարտի 26-ին աշխատանքները վերսկսվելու են Պուտիլովեան և այլ փակված ֆաբրիկաներում, բացի Բալտիական նաւաշինութեան ֆաբրիկայից, ուր աշխատանքները կը վերսկսվեն Զատկից յետոյ

Դումայի դիւանատան ֆինանսական բաժինը կազմել է եւլմտի ընդհանուր հաշւեկշիռը։ Սովորական ու արտակարգ ծախքերի ընդհանուր գումարը 1914 թ. կազմում է 3,580,328,093 րուբլի, 1913 թ. աւելի 329.800,000 րուբլով։ Արտակարգ ու սովորական ծախքերը լինելու են 3.612,659,183 րուբլի, 1913 թ. աւելի 362 միլլիոնով։ Հետևաբար սպասվող եկամուտները աւելանալու են ծախքերից 32.231,090 րուբլով։ Յաւելեալ գումարը նախագծված է գործադրել երկաթուղային կառուցման գործի վրա։

Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնայի բարեհաճ թոյլտուութեամբ Կովկասում հաստատված է մրրիկից վնասվածներին օգնելու համար տեղական մասնաժողով կոմսուհի Եւլիզավետա Անդրէեվնայի նախագահութեամբ։ Շուտափոյթ օգնութեան համար մասնաժողովին թոյլատրված է հանգանակված գումարները ծախսել Կուբանի համար։

Մինչև մարտի 23-ը Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնայի նախագահութեամբ գործող մրրիկից վնասվածներին օգնող յանձնաժողովը ստացել է նուիրատուութիւն ընդամենը 19,016 ր.։

Ծովային մինիստրը մեկնեց Սեվաստօպոլ և Նիկոլայեվ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Երէկ «Իլիա Մուրոմէց» դրէդնօուտով Սիկորսկին 10 մարդու հետ մի ժամի չափ թռիչք կատարեց Պետերբուրգի վրա 1650 մետր բարձրութեամբ։ Այդպիսով սահմանվեց մրցակէտ 10 հոգու հետ բարձրութեան վրա թռչելով։

ՕԴԵՍՍԱ.—Մեծ բազմութեան ներկայութեամբ Բօբրինսկին երկրորդ անգամ զեկուցեց ուգրօռուսների դրութեան մասին։

ՌԻԳԱ.—Առաւօտից գործադուլ արին ռուս-բալտիական, «Ֆէնիկս», էլեկտրականութեան ընդհանուր միութեան և ուրիշ մի քանի գործարաններ։ Ընդամենը գործադուլ են արել 30,000 բանւոր։

68 ֆաբրիկաներում և գործարաններում չեն աշխատում 33,000, նաւահանգստում՝ 700 բանւոր։ Գործադուլը ընթանում է խաղաղ։ Ցոյց անելու և կալանաւորված երկու ագիտատորներին ազատելու մի մասնակի փորձի ժամանակ ոստիկանութիւնը ցրեց ցուցարարներին, կալանաւորելով երեք դըրդիչի։

ԼՈՆԴՈՆ.—Երեկոյեան ս. Մարտինի եկեղեցում Տրաֆալգար ծառաստանում պայթեց մի ռումբ։ Կասկածն ընկնում է սուֆրաժիստուհիների վրա։

ԽԵՐՍՕՆ.—Աքսորավայրի բանտում խուզարկութիւն կատարելիս, բանտարկեալները յարձակվեցին բանտապահների վրա և վիրաւորեցին նրանցից երկուսին։ Անկարգութիւնները ճնշելիս սպանվեցին մի զինւոր և երկու բանտարկեալ. հինգ հոգի վիրաւորվեցին։

ԹԷՀՐԱՆ.—Ներքին գործերի մինիստր պրինց Էյն-ուդ-Դօվլէի հրաժարականը ընդունվեց։ Այդ պաշտօնը առաջարկվել է Սիփէհդարին, որ, ըստ երևոյթին, հակված է ընդունելու։

ՄՈՒԿԴԷՆ.—Ուսաւի կայարանին մօտ բանակած երկու վաշտը ապստամբվեցին և քարուքանդ արին Իտունչժօու քաղաքը։ Ապստամբութիւնը ճնշելու համար ուղարկված են հինգ զօրագունդ Մուկդէնից և Գիրինից։

ՎԻԷՆՆԱ.—Կրակօվից հեռագրում են. «Ի պատիւ Կոստիւշկի ազգային տօնի առիթով կայացան լեհական ժողովրդական կուսակցութեան երկու խմբակների ժողովները։ Նախկին մինիստր Դլուգօշի խմբակի ժողովում ընդունվեց մի բանաձև, որ յանուն ազգային վերածնութեան պահանջում է հանուր լեհ ժողովրդի միութիւնը։ Ստապինսկիի խմբակը խօսեց յօգուտ ինքնուրոյն քաղաքականութեան և դուրս է գալիս լեհական կոլոյի կազմից։ Ազգային հարցի վերաբերութեամբ կուսակցութիւնը համաձայն է այն տարրերի հետ, որոնք ճանաչում են Լեհաստանի անկախութեան գաղափարը։ Բանաձևի մէջ լեհերի պատրաստակամութիւնն է յայտնված՝ կռիւ մղել ընդդէմ Ռուսաստանի, բողոք է արտայայտված պրուսական Լեհաստանում գործադրվող ըստիպողական միջոցների դէմ»։

ԿԱՀԻՐԷ.—Մի քանի մինիստրների նշանակելու ժամանակ տարաձայնութիւններ ծագեցին լորդ Կիտչեների և Մուստաֆա-փաշա Ֆէհմիի միջև։ Այդ պատճառով խեդիվը կաբինէտ կազմելը յանձնեց Հուսէյին-փաշային։ Վերջինիս աջողվեց կազմել մինիստրութիւնը խեդիվի և լորդ Կիտչեների ցանկացածի համաձայն։ Արտաքին գործերի մինիստրի պորտֆէյլը ստանձնել է օրէնսդրական ժողովի փոխ-նախագահ Ադլի-փաշան։

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—Արգելված է ոգելից խմիչքների վաճառումը զինւորական նաւերի վրա, զինւորական նաւակառուցարաններում և ծովային կայարաններում։

ԲԵՐԼԻՆ.—Միջին Գերմանիայի վրայով անցաւ կատաղի մրրիկ, որ մեծ աւերածութիւններ գործեց։ Հարաւային Բաւարիայում մրրիկը շատ տեղերում լուրջ վնասներ է պատճառել։ Պասսաուում քանդվել է 25 մետր բարձրութիւն ունեցող աշտարակը։ Միւնխէնում մի քանի մարդ վիրաւորվել են։

Կեօլնի ոստիկանապետը հրաժարվել է ռուս ինժեներ Պոլեակովի ձերբակալութեան գործի առիթով։

ՀՌՕՄ.—Պալատը ազատվեց զբաղմունքներից մինչև ապրիլի 23-ը։

ՏՕԿԻՕ.—Այրի կայսրուհու առողջութիւնը վատթարանում է։ Խիստ սուր կերպարանք է ստացել երիկամունքների հիւանդութիւնը։

ՏՕԿԻՕ.—Կատօն հրաժարվեց ընդունել ծովային մինիստրի պորտֆէյլը։ Եւ որովհետև Կիյուրան անկարող եղաւ գտնել համապատասխան թեկնածու, ուստի նա հրաժարվեց կազմել կաբինետ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

—о—

ՔԻՒՐԴԱԿԱՆ ԽԼՐՏՈՒՄՆԵՐ

—

Կ. ՊՕԼԻՍ. — Մեծ պետութիւնների դեսպանները յանձնեցին մեծ վէզիրին այն հինգ թեկնածուների ցուցակը, որոնք կարող են նշանակվել Արևելեան Անատոլիայում երկու գեներալ-տեսուչների պաշտօններում։

Բիթլիսից հաղորդում են, որ կռիւը դադարեց։ Ապստամբված քիւրդերը փախել են քաղաքից։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլսից հեռագրում են, որ հայոց պատրիարքի ստացած տեղեկութիւնների համաձայն, քիւրդերի ապստամբութեանը մասնակցում են մի քանի հազար մարդ։ Նշանաւոր Խնդրակատար վանքը քարուքանդ է արված։ Շատերը ապաստանում են Բիթլիսի ռուսաց հիւպատոսարանում։ Փախստականների թւումն է գնդապետ Սավֆէտը, որ Քեամիլ-փաշայի կաբինէտում վարում էր Կ. Պոլսի բերդապետի պաշտօնը և որ կազմակերպեց զինւորական ապստամբութիւնը։

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

I

Խնուս, 9 մարտ

Կարդացինք «Մշակի» մէջ Էրզրումի յայտնի «ուրբաթի» մասին Քուրմի թղթակցութիւնները։ Նոյն իրադարձութեանց պատմութիւնները արդէն լսած էինք Էրզրումէն եկող շատերէն, որոնք իբրև ականատեսներ և այդ սարսափները իրենց կաշիին վրայ կրողներ աւելի խտացած գոյներով կը նկարագրէին, քան Քուրմն էր իր համեստ թղթակցութեանց մէջ պատկերացուցեր։ Ստացանք նամակ մը ևս Բիթլիսէն, ուր լրատուն կիմացնէ, թէ ասկէ քանի մը օր առաջ շէյխ Ջալալէդդինի որդի շէյխ Սէիդ Ալի հազարէն աւելի ձիաւորներով կուգայ Բիթլիս կը մտնէ քաղաքէն 7—8 ժամ հեռու գտնուած Խարզան գիւղաքաղաքը և կը սպառնայ ամբողջ հայութիւնը բնաջինջ ընել, եթէ կառավարութիւնը համաձայնի «կօնտրօլի» խնդրոյն հետ, և կաւելցնէ. «Մենք իսլամ ենք և միայն ու միայն իսլամ կը ճանչնանք»։ Ապա կերթան հայկական Խնդրակատար վանքը կը մտնեն, կառնեն Աւետարանը և Ղուրանի հետ քով քովի դրած կերդնուն, որ իրենք միայն շէրիաթը կը ճանչնան և մէշրութիէթ, կօնտրօլ-մօնտրօլ չպիտի ճանչնան ու արեան գնով պիտի իրագործեն իրենց երդումը։

Բիթլիսի և շրջակայի հայ ժողովուրդը ահ ու սարսափի մատնուած՝ քանի մը օր տուները մէջ կը փակուի, շուկան գոց կը մնայ. հայու խանութ չի բացուիր։ Կառավարութիւնը այս ամենուն հանդէպ լուռ ականատես կը

Միայ և միայն ու միայն կաշխատի համոզել շէյխը ըսելով՝ «Ատոնք լաֆ (խօսքեր) են. ինչ կօնտրօլ-մօնտրօլ» և այդպիսով քաղաքէն հանել իր 1000 ձիաւորներով։ Լրատուն կաւելցնէ. «Քիւրդ ժողովուրդը ինքն իր գլխուն ատանկ բաներ ընող չէ. անիկա մինչև ֆիթիլ մը չստանայ կառավարութենէն, նման քայլ չի ըներ. ասիկա Իթթիհադի սարքածն է, մօրը մանածը կուզէ ներկել»։ և ի հաստատութեան վերոյիշեալի՝ կը բերէ այն փաստը, որ ասկէ ամիս մը առաջ հոս եկած էին Էրզրումէն թէ որտեղէն իթթիհադական 2 գաղտնի պրօվօկատօրներ, որոնք քիւրդերու հետ գաղտնի խորհրդակցութիւններ կունենային և շէյխ Սէիդ Ալիի կողմէ ալ լաւ ընդունելութիւն գտած էին... Նամակին մէջ կը նկարագրէ անոնց (պրօվօկատօրներու) դիմագծերը, հասակը և այլն, որ ճիշդ կը համապատասխանէ մեր կողմերը ասկէ $1^{1}/_{2}$ ամիս առաջ երեւցած պրօվօկատօրներուն։ Անոնք մեր շրջանին մէջ ալ ուզեցին փրղախ մը դարձնել, բայց չյաջողեցան։

Թիւդջարի (վաճառականի) դիմակին տակ հոս յայտնուելով անոնք նոյն խորհրդակցութիւնները կունենան և տեղիս քիւրդերու մեծերուն հետ։

Այս վերջինները չեն համաձայնիր քայլ մը ընել, մինչև Գուլհասարի շէյխ Մահմուդի որդի շէյխ Սայիդ էֆէնդին չհրամայէ։

Պրօվօկատօրները, լաւ ճանչնալով վերոյիշեալ շէյխը և գիտնալով անոր տրամադրութիւնները, կերթան Թէքմանի Շամի գիւղի շէյխ Մուսայէն կուզեն հրաման հանել, բայց հոս ալ անյաջողութեան կը հանդիպին և յոյսերնին կտրած մեզի հանգիստ թողլով կերթան Բիթլիս՝ այնտեղ, ուր աւելի պարարտ հող կայ իրենց դաւերը նիւթելու։

Էրզրումի, Խնուսի և Բիթլիսի իրար յաջորդող դէպքերը արդեօք կասկած կը թողուն, որ սա որոշ մշակված ծրագրի մը հանգոյցներ են, որ հոս ու հոն կը քակուին...

Բայց այդ խաղը վտանգաւոր խաղ է, խաղ, որ կարող է պայթիլ նոյն իսկ կառավարութեան գլխուն. քիւրդական շարժումը ասով իր հացին իւղ կը քսէ։

Տեղացի

II

Էրզրում, 3 մարտ

Թիւրքական հայահալած ու հայակեր րէժիմի զոհերուն՝ քէօփրի-քէօյցիներու փեսար. 25-ին տեղիս առաջնորդարանին ուղղեալ գրութենէն մաս մը։ Գրութիւնը ստորագրուած է գիւղին երեւելիներուն, Թաղական խորհրդին անդամներուն, դրացիներու և ականատեսներու կողմէ։

«Ձերդ սրբազնութեան կը յայտնենք, թէ երբ այստեղ խուզարկութիւնը սկսած էր, ինչպէս երկնքէն կայծակը կը ժայթքէ ցած, այնպէս բորբոքուած մի հրդեհի նման, կայմակամ էֆէնդին ներս մղուեցաւ և գործին տեղեկանալով աւելի սաստիկ բռնկուեցաւ և մեր բոլորին ու Նազար-քէհեային երեսին ի վեր սկսաւ հայհոյել, կնիկ, աղայ, հարս, աղջիկ, շատ բռնութիւններ ընելով, շատերը ծեծի ենթարկելով սկսաւ հարցաքննել։ Կայմակամը և Հաֆըզ-Իսմայիլ միւլազըմը*) յայտարարեցին թէ՝ «եթէ այս սպանութիւնը նոյնիսկ ուրիշ մէկի կողմէ կատարուած է, նորէն վրէժը պիտի լուծենք հայերէն»։ Յիշեալ Հաֆըզ յայտարարեց՝ «5–10 հոգի պիտի սպաննեմ և եթէ չսպաննեմ՝ իմ նշաններս պիտի քակեմ, վրէժս պիտի լուծեմ և իմ բաղձանքս պիտի կատարեմ»։ Տեղդ բերուած ձկնորսներէն Ցակոբը, որ բռնեցին, 5 ոստիկաններու ընկերակցութեամբ ճանապարհ դրին, սակայն եադը զալթիս մէմուրի Իզզէթ էֆէնդին 5 ժանդարմով ետեւէն երթալով կէս-ճանապարհին տղան բռնութեամբ հարցաքննելով վերադարձան կրկին գիւղ, և խուզարկութիւնը շարունակուեցաւ աւելի սաստկօրէն։

«Չմոռնանք ըսել, որ այս խուզարկութեան ժամանակին, այդ ձկնորսներէն մէկուն մայրը և երկուքին կիները բռնութեամբ ձերբակալելով տարած են այստեղի զօրանոցը և գիշերը, մենք որ անոնց հետ էինք, մեզի ալ այդտեղէն արտաքսելով երեք ժամ իրենց քովը զօրանոցին մէջ սպասցուցին և վերջը առանձին առանձին ոստիկաններու ձեռք մատնելով (լալով) այդտեղ գիշերանց ժամը 2-ին կառավարութեան ներկայացուցին»։

Փաստական այս մասէն յետոյ երկար ու բարակ նկարագրելով իրենց անել դրութիւնը՝ քէօփրի-քէօյցիք կաղերսեն առաջնորդ սրբազանին, որ կառավարութեան այդ հայակեր տրամադրութիւններով լեցուած պաշտօնեաներուն, եթէ կայ արդարութիւն, իրաւունք, յանուն սահմանադրութեան, յանուն ճշմարտութեան դիմումներ ընէ արժանի պատիժ տալու։

Իրազեկ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

—

Վան, 22 փետր.

Վերջերս քանիցս գրեցի, որ վալի Թահսին բէյի նախաձեռնութեամբ Աղբակի գաւառում կազմվել էր մի յանձնաժողով, հայոց հողային հարցը լուծելու նպատակով։ Այդ յանձնաժողովն իր գործն աւարտած համարելով՝ մի պաշտօնական յայտարարութեամբ իր լուծած խնդիրների ցանկը հրատարակեց, սպասելով վարձատրութեան։ Աչքից անց կացնելով այդ ցանկը՝ մարդ ապշած է մնում. յանձնաժողովը աւելի շատ քիւրդ բէյերի ու աղաների առնելիքն է սաղացրել կրկնակի ու եռակի յաւելումներով, քան թէ մի որեւէ օգուտ բերել հայերին։

Եւ ահա թէ ինչպէս։

Դէպքերի ժամանակ հալածված, կողոպտված հայը դիմել է քիւրդ հարեւանին եւ նրանից մի գումար վերցրել՝ գրաւ դնելով նրա մօտ ոչ թէ պաշտօնական կերպով, այլ պարզ մուրհակով իր մի քանի կտոր հողերը, պայմանով որ քիւրդը շահագործէ հողերը պարտք վերցրած գումարի տոկոսի փոխարէն՝ մինչև պարտքի վճարումը։ Ի՞նչ խօսք, որ քիւրդը հոգս է քաշել մուրհակում նշանակել տալ կրկնակի կամ եռակի գումարներ, որպէսզի անհնարութեան մատնէ հային վճարելու իր պարտքն ու հողերը ետ ստանալու։ Դէպքերից մինչ այսօր, այսինքն աւելի քան 15 տարի, հողերը մնացել են քիւրդերի ձեռքում. սրանք մշակել են այդ հողերը, արդիւնքը վերցրել և իրանց տուած գումարների մի քանի պատիկը ստացել են արդէն։ Այս դէպքում ամէն մի պարկեշտ կառավարութեան պարտքն է հողից ստացված արդիւնքը հաշւակցել վերցրած գումարի և նրա տոկոսների փոխարէն, իսկ հողը վերադարձնել հողատիրոջ. բայց յանձնաժողովը այդպէս չէ արել, այլ վճռել է, որ պարտապան հայը վճարէ այն գումարը, որ նա ստացած լինելը խոստովանում է, իսկ աւելորդ գումարը, որի համար քիւրդերը երդումով կամ վկաներով հաստատել են, որ տուել են, վճարեց կառավարութիւնը, պայմանով որ հայերը որոշեալ պայմանաժամից յետոյ վերադարձնեն նոյն գումարը կառավարութեան։ Վերջին օրերում միայն վալի Թահսին բէյ յայտարարեց, որ կառավարութիւնը իր գանձից վճարած այս գումարները բաշխում է ու էլ ետ չէ պահանջում հայերից։ Չը մոռանանք ասել, որ կառավարութիւնը հայերից պահանջում է այդ խլված հողերի տուրքը, որ քիւրդերը անվճար են թողել և այժմ հասնում է հողերի բուն արժէքի չափ կամ նրանից քիչ պակաս գումարի։

Կառավարութեան լուծել կարծած այս խնդիրները որչափ որ նպաստաւոր են քիւրդերին, քան հայերին, այնու ամենայնիւ հողային խնդրի մի աննշան մասն են կազմում. հողերի մի մեծ մասը գրաւվել է օրինականացած ձեւերով, որը այսօր վերադարձնելու օրինական հիմք չէ գտնում կառավարութիւնը և գրաւումը համարում է վճռական. յիշենք մի քանի օրինակներ։

1) Ջուլումի տարիներում երբ հայերը գնդակների և եաթաղանների հարուածներից զերծ մնալու համար որոշել են գաղթել կամ փախչել երկրից, նրանցից շատերը Աղբակ գաւառում դիմել են քիւրդերին և մի ճանապարհածախս ձեռք բերելու համար նրանց ծախել են իրանց հողերը շատ չնչին գումարների փոխարէն, անշուշտ, յոյս չունենալով ի հարկէ կրկին վերադառնալու հայրենիք։

2) Գաղթողներից կամ փախչողներից շատերը թողել են անվճար պարտքեր մասնաւորների կամ երկրագործական բանկին և կամ կառավարութեան գանձին՝ անվճար տուրքերի և կամ այլ պարտքերի փոխարէն։ Հայերի հեռանալուց յետոյ պարտատէրերը դատարանին դիմել ու վճռագիրներ են ստացել, որով նրանց հողերը ծախվել են քիւրդերին, օրինական ձեւականութեամբ անշուշտ, այնչափ աննշան գումարների փոխարէն, որ այժմ արժում են առաւել քան տասնապատիկ գնով։

3) Տեղացի քիւրդ կամ Թիւրք երեւելիները կառավարութեան պաշտօնեայ կամ ազդեցիկ պաշտօնեաների հետ մտերիմ յարաբերութիւն ունենալով՝ աջողել են զանազան կեղծ ու պատիր միջոցներով գաղթական հայերի թողած հողերի արձանագրութիւնը իրանց անուան փոխելու, որոնց և տիրացել են։

4) Քիւրդ գրաւողներից շատերը հողերի մի քանի բաժինը բաժնետէրերի մի մասից գնելով՝ միւս բաժնետէրերի բաժիններն էլ գրաւել են՝ կեղծ վկայաթղթեր ներկայացնելով կառավարութեան և գրաւումը օրինականացնելով։

Կան գրաւումի ուրիշ այլազան ձեւեր էլ, որ զանց եմ անում յիշել, իսկ կառավարութիւնը իրան ձեռնհաս չէ համարում լուծել այսպիսի խնդիրներ, համարելով դատաստանական վճռով լուծելի, ուստի խնդրատէրերին առաջարկում է դիմել դատարաններին ու վճռագրերով հաստատել իրանց բռնադատված իրաւունքը։ Մի այլ անգամ ես ցոյց կը տամ թէ դատաստանական դահլիճը ինչ կերպ է վերաբերվում այդպիսի հողադրկումների դատերը վճռելիս, և թէ կառավարութիւնը ինչ եղանակով է վերաբերվում նրանց վճիռները գործադրելիս։

Իսկ այժմ բաւականանում եմ ասել, որ Հայաստանում հողային գրաւումների խնդիրը այնչափ բարդ, կնճռոտ ու ընդարձակ խնդիր է, որ ո՛չ Թիւրք դատարանները և ո՛չ էլ Թիւրք հասկացողութիւնը կարող են նրանց բաւարար ու արդար լուծում գտնել. մնում է տեսնել, թէ հայկական բարենորոգումների հարցը վճռվելուց յետոյ հողային հարցը ինչ փուլի ներքև պիտի մտնէ այսուհետեւ։

Մորակ

ՄԻԼԻՒԿՈՎԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

—

Մոսկվա, 17 մարտի

Երէկ, Մոսկվայում, հայերի հասարակական կեանքի մէջ տեղի ունեցաւ մի, իմ կարծիքով, նշանաւոր, արձանագրութեան արժանի, դէպք. վաճառականների ժողովարանում, մեծ թւով գումարված հասարակութեան առջև, Պավել Նիկօլայեվիչ Միլիւկօվը կարդաց, այդպիսի մեծ թւով հասարակութեան համար, իր առաջին, անդրանիկ դասախօսութիւնը հետեւեալ վերնագրով. «Հայերը Թիւրքիայում և մեծ պետութիւնների քաղաքականութիւնը»։ Հասարակութեան մեծամասնութիւնը թէև կազմում էին հայերը, բայց կային բաւական և օտարազգիներ։ Դէպքը ես վճռում եմ անուանել նշանաւոր ո՛չ թէ նրա համար, որ կարդացվեց մի խնդրի մասին, որը առաջնակարգ կարեւորութիւն ունէր հայերի համար—այդ հարցի առիթով կարող էին կարդալ շատերը և դէպքը դարձնել խոշոր անուանել չէր կարելի—այլ նրա համար, որ դասախօսի դերում հանդէս եկաւ ինքը Պավէլ Նիկօլայեվիչ Միլիւկօվը, ռուս առաջնակարգ ինտելիգենցիայի առաջնակարգ ներկայացուցիչը։

Իր դասախօսութեան մէջ ատենախօսը ծանրացաւ աւելի Թիւրքահայոց խնդրի քաղաքական կողմի վրա, քան իրանց Թիւրքահայերի դրութեան վրա։

Հայկական խնդրի մասին նա սկսեց իր պատմութիւնը 1878 Թւականից. նա սկսեց նրանից, որ այդ օրերում Ռուսաստանը անկեղծ կերպով ցանկանում էր թեթեւացնել հայերի դրութիւնը Թիւրքիայում, որ այդ առիթով Սան-Ստեֆանօյի դաշնագրի մէջ մտցված էր նոյնիսկ առանձին յօդուած, բայց որ այդ դիտաւորութիւններին արգելք եղաւ Անգլիան, երբ մանաւանդ Կիպրոսի դաշնագրով յանձն առաւ հսկել Թիւրք երկրի անձեռնմխելիութեան վրա։ Ապա անցնելով 1890 Թւականներին, նա պատմեց, որ այդ օրերում՝ մեր յիշած երկու հուժկու պետութիւնները—Ռուսաստանը և Անգլիան փոխանակվեցին դերերով, որ մինչև Անգլիան—տրամադիր էր բարւոքելու Թիւրքահայոց դրութիւնը, Ռուսաստանը ետ կանգնեց իր նախկին մտադրութիւնից և հասկացնել տուեց, որ նա այժմս հրաժարվում է հայերին էապէս օգնելու մտքից։ Մօտաւորապէս 1910 Թւականների սկիզբներից խնդրի մէջ հարկաւոր համարեց խառնվել Գերմանիան, որը մինչև այդ օրերը ձեռնպահ էր և չէր հետաքրքրվում հայկական հարցով, որովհետև նա այդ օրերից սկսած արդէն ստեղծել էր իր մասնաւոր շահերը Փոքր Ասիայում—Բաղդադի ճանապարհը—և, իր նոր շահերի տեսակէտից, նրա համար միևնոյն չէր, թէ ինչպէս կը տնօրինվի այդ հայկական հարցը։ Պատմեց այն խժդժութիւնների մասին, որը յարուցանում էր գերմանական դեսպանը Կ. Պօլսում և Պօղոս Նուպար-փաշայի կատարած դերի մասին այդ խժդժութիւնները փարատելու մէջ։ Ապա անցնելով ենթադրվող ռեֆօրմների էութեանը—նա յայտնի է հայ հասարակութեան—ատենախօսը վերջացրեց իր դասախօսութիւնը այն մտքով, որ հայկական հարցը այժմս դրված է մի այնպիսի մակարդակի վրա, որտեղ նա կարող է ստանալ իր կատարեալ բարեյաջող վճիռը, բայց միայն մի պայմանով՝ եթէ... չը փոխվեն հանգամանքները, այսինքն եթէ Եւրոպայի մէջ տեղի չունենան ոյժերի, հետեւաբար և հայեացքների, նոր համախմբումներ։

Հասարակութիւնը երկու ժամ շարունակ մեծ, լարված ուշադրութեամբ լսեց դասախօսին, բառ անգամ բաց չը թողնելով նրա խօսքերից և, ապա, երբ նա վերջացրեց իր դասախօսութիւնը, վարձատրեց նրան բուռն, հուժկու ծափահարութիւններով։

Դարերի ընթացքում կարծեօք մարդ, ազգութիւն չը մնաց, որ չը նեղէր, չը կեղեքէր, չը խոցոտէր հայի ինքնասիրութիւնը։ Եւ, ահա, մի այդպիսի խոցոտված, հալածված ժողովրդի մոռացված դատի պաշտպանի դերում, հայ հասարակութեան հրաւէրով, հանդէս եկաւ Պ. Ն. Միլիւկօվը և մի քանի մխիթարական, խրախուսական խօսքերով յիշատակեց այդ ակտը։

Եկսցեսները կան և կը մնան խոցոտված մարդկանց հոգեբանութեան մէջ։ Եւ, ահա, իր զայրացած բոպէներին, այդ խոցոտված մարդիկ պատրաստ են իրանց բոլոր ոխը, զայրոյթը, ցասումը ուղղել ո՛չ միայն դէպի անխիղճաբէս վիրաւորողի անձնաւորութիւնը, այլ դէպի այն ամենքը, ով իր ծագումով, հաւատով, սովորութիւններով և ծէսերով յիշեցնում է այդ վիրաւորողին... Ինձ թւում է, թէ Միլիւկօվները այն մարդիկն են, որոնց վրա միմիայն հնարաւոր է ազգերի հաշտութիւնը... Բաւական է մի կամ մի քանի տասնեակ այդպիսի մարդկանց ներկայութիւնը, որպէսզի ազգերը մոռանան իրանց հին հաշիւները, իրանց վէճերը և սփոփված ու մխիթարված ձեռք մեկնեն միմեանց՝ աւելի լայն խնդիրներ դնելու և լուծելու համար։

Ինձ թւում է՝ ազգերի թէ համերաշխութեան, թէ առաջադիմութեան և թէ բաղդի համար անհրաժեշտ է, որպէսզի Միլիւկօվները ամենուրեք աճեն և բազմանան, իբրև երկնքի թռչունները և իբրև ծովերի աւազը։

Ա. Դուլեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Մօտ օրերս Թիֆլիսում տեղի է ունենալու Հայոց Պատմական և Հնագիտական Ընկերութեան բացումը։

Ի նկատի ունենալով այն աչքի զարնող հանգամանքը, որը մինչև այժմ հայկական բազմաթիւ ձեռագրեր և արձանագրութիւններ չեն ենթարկվել գիտական մանրազնին ուսումնասիրութեան, անցեալ տարվայ սկիզբներին մի խումբ մասնագէտների նեղ շրջանում միտք է յղանում հիմնել մասնագիտական համապատասխան մի ընկերութիւն։ Կազմված է մի կանոնադրութիւն և

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՍԱՐ ԹԷ ՄՈՒԿ, ՄՈՒԿ ԹԷ ՍԱՐ...

(Նուէր Էջմիածնի միաբանութեան)

I

Մեզ դիմում են ամեն կողմից և հարցանում, ինչո՞ւ մենք լուռ ենք մնացել և չենք տալիս արձագանք Ղլտճեան հարցին։

Մի տաք Թղթակից էլ գրում է Պարսկաստանից.

«Ձայն բարձրացրէք փրկելու մեր եկեղեցին անուանարկումից և աւազակներից...»։

Պատասխանում է, որ բարձր սարը ծնում է մի...մուկ...

Պատասխանում է և հակառակը։

Երբեմն մի փոքր մուկը դառնում է մի սար...

Ղլտճեանի դէպքը ինձ համար մի մուկ էր, որի մասին չարժէր էլ խօսել...

Բայց բանը բանից անցնում է. Ղլտճեանը մեծանում է, մեծանում, սկզբից դառնում ուղտ, յետոյ տուն, այժմ արդէն սար է դարձել, մի Ղազբեգ, Էլբօրուս...

«Ձայն բարձրացրէք փրկելու մեր եկեղեցին»...

Երեւում է, որ մեր եկեղեցին վտանգի մէջ է...

Մեր եկեղեցին կը կորչի, եթէ Ղլտճեանը վարդապետ ձեռնադրվի...

Իսկապէս մուկը դարձել է սար և վախեցնում է մեզ...

II

Կարդում եմ բոլոր բողոքները և ոչինչ չեմ հասկանում...

Ոչ։ Ես Ղլտճեանի պաշտպանը չեմ. միայն բողոքողների հոգեբանութիւնը ինձ հասկանալի չէ...

Չեմ համարձակում եկեղեցու կրթեալ սպասաւորներին կարդալ և մեկնել Աւետարանը։ Թող ներվի ինձ միայն անհանգստացնել Բարաբբայի ստուերը...

ՄԵԹԷ Ղլտճեանը Բարաբբայից էլ աւելի մեղաւոր է։

Եւ մի՞թէ վարդապետի կոչումը արքայութիւնից էլ վեր է...

Եթէ դուք եկեղեցու սպասաւորներ էք, եթէ եկեղեցու հիմքը Աւետարանն է, ինչո՞ւ փոխանակ ուրախանալու և ցնծալու, որ մոլորեալը ապաշխարում է և դառնում իր մօր՝ եկեղեցու գիրկը, դուք բարձրացնում էք վայնասուն...

Ձեր քարոզներից փչում է կղերականութեան ոգին...

Հայ կղերականութեան, որ ոչինչ չէ սովորել, որ իբր թէ կարգ և կանոն է պաշտպանում, մինչդեռ խախտում է և կարգ, և կանոն...

Բողոքի տողերի միջից կարելի է կարդալ շատ բան...

Բայց այդ բողոքը մեր հոգեւորականութեան ոչ վարկը կը բարձրացնէ և ոչ էլ մեզ կը համոզէ, որ միաբանութիւնը ճանաչում է կարգապահութիւն..

Այդ բողոքը ապացուցանում է, աւաղ, և ուրիշ բան, որ մեր բարձր հոգեւորականութիւնը դեռ չէ ըմբռնել քրիստոնէութեան վեհ գաղափարը...

III

Քրիստոնէութեան վեհ գաղափարը...

Լազարեան ճեմարանում աչքերիս առաջ անցել են շատ կրօնուսոյց քահանաներ... Ոսկեայ մեծ խաչերը և շքանշանները լանջերին նրանք իսկապէս մեզ բան չեն սովորեցրել...

Բոլոր դասարաններում կրօնը մի ծանր առարկայ էր դարձած, որից մենք խուսափում էինք, փախչում։

Սև տախտակի վրա ես յունարէն տառերով գրում էի բոլոր դասը։ Ընկերներս նայում էին տախտակին և պատասխանում։

Եւ մենք անհամբեր սպասում էինք զանգին։

Զանգը պիտի աւետէր մեզ մեր ազատութեան բոպէն... կրօնից...

Բայց կար մի դասատու, ում կրօնի դասերը առաջին տեղն էին բռնում...

Դա նախակրթարանն էր...

Մենք վախենում էինք, որ զանգը կը խփէ և մեր դասը կը վերջանայ...

Մեր ուսուցչի կուրծքը զարդարված չէր շքանշաններով...

Նա չունէր անգամ խաչ ոչ կրծքին և ոչ անգամ վզին...

Դա մեր յայտնի բանաստեղծն էր...

Սմբատ Շահազիզը...

Նա մեկնում էր մեզ Աւետարանը... Պատմում էր Քրիստոսի կեանքը, նրա անմահ գաղափարները, պատմում էր այնքան սիրուն, վառվռուն, գրաւիչ լեզուով, որ մենք բոլորս և մեզ հետ մի հայախօս պարսիկ ընկեր լաց էինք լինում...

Եւ մինչդեռ մարգարիտ արտասուքները թրջում էին մեր մանկական թշերը, մեր սրտերում բացվում էին, ծաղկում և բուրում մանիշակներ, մեխակներ և վարդեր...

Քառասուն տարիներ են անցել, իսկ մենք միշտ մեր աչքերի առաջ կենդանի տեսնում ենք բանաստեղծ Շահազիզի պատկերը...

Քրիստոնէութեան գաղափարը մեզ ներշնչեց նա, մի աշխարհական, մի բանաստեղծ...

Իսկ մնացեալ դասարաններում մենք բան չը սովորեցինք...

Կրօնուսոյց քահանաները Աստուած էին ասում, բայց Աստուծոյ շնորհը և շունչը չը կար նրանց ասածների մէջ, ինչպէս չը կայ Ղլտճեանի վերաբերեալ բոլոր բողոքների մէջ...

IV

Այսպէս Ղլտճեան դէպքի մէջ մի մուկ դառնում է մի ուղտ, մի տուն, մի սար...

Բանը ուրեմն մկան մէջը չէ...

Հիւանդ է Էջմիածինը։

Հիւանդ է մեր հոգեւորականութիւնը...

Եւ որովհետև եկեղեցին մերն է, հարկաւոր է վերջապէս, որ մեր ժողովրդի ձայնը հասնի և լսվի Էջմիածնում...

Ես ստանում եմ տրտունջներ և գանգատներ և՛ Էջմիածնից, և՛ Թիֆլիսից։

Դառն տրտունջներ, ծանր գանգատներ...

Ճշմարիտ են միթէ բոլոր լուրերը, որ լուրեր էլ չեն իսկապէս, այլ գոյժ և բօթ...

Իբր թէ Վեհափառը ջոկում է հոգեւորականներին իրան ընտրողներ և չընտրողների, առաջիններին իրան մօտեցնելով և պաշտօններ շնորհելով, երկրորդներին թողնելով գործերից հեռու մեկուսացած, խորթ...

Չեմ հաւատում...

Ազգը, որ «կեցցէ Կաթողիկոս» կանչեց, իրաւունք ունի պահանջելու, որ Լուսաւորչի գահը բարձրացնելուց յետոյ՝ Վեհափառը մնայ մինչև մահը արդարադատ՝ հաւասար բոլորի համար, որովհետև նա Ամենայն Հայոց Կաթողիկոս է, այլ ոչ մի մասի կամ կուսակցութեան..

Իբր թէ մեր բարձր հոգեւորականութեան մեծամասնութիւնը իրան պահում է իբր ապագայ կաթողիկոսացու, յարմարվելով հանգամանքներին, ժամանակին, վախենալով իր պարտքը կատարել այն չափով, ինչ չափով պահանջում են ազգի շահերը...

Իբր թէ Էջմիածնի վանականների խուցերը ամեն տեսակ ինտրիգաների խոր և մութ բոյներ են...

Ահա ինչն է սոսկալի, ահա ինչի՛ վրա խօսեցէք, ցաւեցէք...

Եւ ես իսկապէս շատ եմ վախենում, որ մի փոքր մուկ սար դարձնելով ցանկանում են, որ ազգը սարի ետեւից չը տեսնի այդ բոլոր կեղտերը։

Կեղտերը, որ ժամանակ է մաքրել, որպէսզի ազգը չը խեղդվի...

Բայց ո՞վ է ազգի վրա մտածողը, ցաւողը...

Շատ աւելի հեշտ է հանել հարայ-հրոց՝ «կորչում ենք, փրկեցէք մեր եկեղեցին անկումից, Ղլտճեանն է գալիս...»։

V

Ղլտճեանն է գալիս...

Թող գայ։ Եթէ նա գալիս է իբր Թշնամի, նա մեզ ահ չէ ներշնչում...

Ղլտճեաններ եկել են, գնացել, իսկ եկեղեցին կայ և կը մնայ...

Կը մնայ, կամրանայ և կը զօրանայ, եթէ միայն մեր հոգեւորականութիւնը լինի լուսաւոր և կրթված...

Կրթված... Չէ որ կրթութիւնը մեզ պակասում է միշտ, անգամ երբ կայ լուսաւորութիւն։

Ո՞ր աշխարհ, ո՞ր ազգի մէջ կարող է պատահել, որ մի վարդապետ թքի հրապարակով իր կոչման վրա, դառնայ ծաղրի առարկայ...

Ո՞ր աշխարհ, ո՞ր ազգի մէջ ընդունված է, որ եկեղեցու ստորագրեալ սպասաւորները... բողոքներ արձակեն իրանց հոգեւոր պետի դէմ... տպեն բողոքները լրագիրներում...

Այդ կարելի է անել անպատիժ միայն մեզանում... Չը կայ կրթութիւն...

VI

Սա՞ր թէ մուկ, մո՞ւկ թէ սար...

Մուկ, մուկ, միայն մուկ...

Թող մուկը հանգիստ մտնէ իր ծակը, իսկ սարը իր տեղը մնայ...

Բաւական է քօղարկվել։ Վերցրէք ձեր վարագոյրը։ Մի խաբէք և մի խաբվէք։ Խօսեցէք իբր իսկական քրիստոնեաներ, ինչպէս խօսում էր իմ ուսուցիչ բանաստեղծ Շահազիզը, որ մարգարիտ-արտասուքները թրջէին մեր թշերը, իսկ մեր սրտերում բացվէին, ծաղկէին և բուրէին մանուշակներ, մեխակներ և վարդեր...

Հիւանդ է Էջմիածինը, հիւանդ է մեր հոգեւորականութիւնը...

Եւ ահա ինչո՞ւ մի Ղլտճեան, մի փոքր մուկ, մեծանում է, մեծանում է, սկզբից մի ուղտ, յետոյ տուն, վերջապէս մի սար դառնում...

Չը գիտես Ղազբեգն է թէ Էլբօրուսը...

Մինչդեռ մի մուկ, հասարակ մուկ...

Գր. Չալխուշեան

Նոր-Նախիջեւան

---

*) Ծան. Թղթակցի.—Սա բարեկարգութեանց համար Ռումէլիէն հոս եկած սպայ մըն է։

ներկայացված ի հաստատութիւն։ Ընկերութեան վարչութիւնը բաղկացած է գրեթէ ամբողջովին մասնագէտներից, ինչպիսիք են՝ Մեսրոպ եպիսկոպոս, Ստեփաննոս Մալխասեան, Սմբատ Տէր-Աւետիքեան, Ա. Շահնազարեան, Լիսիցեան և Աղանեան քահ.։ Անդամ քարտուղարը Ս. Տէր-Աւետիքեանն է։

Ընկերութեան նպատակն է «ժողովել և ուսումնասիրել հայոց պատմութեան և հնագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ նիւթեր»։ Ընկերութիւնը պիտի աշխատի հաւաքել հայկական հնութիւնները, պահպանել և տալ նրանց նկարագրութիւնը։ Պիտի ուսումնասիրէ հայոց պատմութեան, հայագիտութեան և հնագիտութեան վերաբերեալ գրաւոր յիշատակարաններն ու վաւերագրերը։ Պիտի աշխատի կազմակերպել գիտական արշաւախմբեր՝ պատմական նիւթեր ժողովելու և հնագիտական ուսումնասիրութիւններ ու պեղումներ կատարելու նպատակով։ Ապա և մրցանակներ է նշանակելու պատմական և հնագիտական լաւագոյն աշխատութիւնների համար։ Պիտի ունենայ և իր պարբերականը։

Որովհետև նպատակը զուտ գիտական է, ուստի և աշխատող ոյժերը պիտի լինեն գլխաւորապէս մասնագէտ ոյժերից։

Նորակազմ Ընկերութեան վարչութիւնը մինչև այժմ զբաղված է եղել մեծ մասամբ կազմակերպչական մասով։ Նա դիմել է Ռուսաստանի և արտասահմանի ձեռնհաս ոյժերին, խնդրելով նրանց անդամակցութիւնն ու աջակցութիւնը։

Ընկերութեան հանդիսաւոր բացմանը վարչութեան անդամներից ոմանք կարդալու են զեկուցումներ՝ Ընկերութեան նպատակի, հնագիտութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ.

X. X.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

(Մարտի 24-ի նիստը)

Սովորական ժամին իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկ գրաւում է նախագահական աթոռը։

Նախորդ նիստի արձանագրութիւնը հաստատվելուն պէս, իրաւասուների շարքերից լսվում են ձայներ.

— Խօսք եմ խնդրում։

Հարցապնդում անել ցանկացողներն են դրանք, և այդպիսիների թիւը հասնում է 8-ի։

Նախագահը, նախ քան խնդրողներին ձայն տալը ցանկալի է համարում, որ հարցապնդումները շօշափեն աւելի ընդհանուր, հասարակական նշանակութիւն ունեցող հարցեր, այլ ոչ թէ մանաւոր ու աննշան խընդիրներ, ինչպէս լամպօչկաները։

Նախագահի այդ խօսքերի առիթով, սկըսվում է նկատառութիւն իրաւասու Բաբեանի և նախագահի միջև։

Ա. Բաբեանը ուզում է խօսել, իսկ նախագահը արգելում է։

Միջադէպը վերջանում է նրանով, որ Բաբեանը առաջին նախազգուշացումն է ստանում, և մուծվում է արձանագրութեան մէջ։

Այնուհետև սկսվում են հարցապնդումները։

Իրաւասու Միտկեվիչը խնդրում է բացատրութիւն տալ, թէ ինչու մինչև այժմ չէ սալայատակված Վելիկոկնեաժեսկայա փողոցը և չէ գնված Ռոտինեանի հողաբաժինը։

Նախագահի տուած բացատրութիւնից պարզվում է, որ սալայատակելու պայմանաժամը դեռ չէ լրացել։ Ինչ վերաբերում է Ռոտինեանի հողաբաժնին, նա մինչև այժմ չէ հաստատված աւագ նոտարից այն պատճառով, որ քաղաքը գնել է 66 քառ. սաժ. տարածութիւն, մինչդեռ հաստատելու ներկայացրած կալուածագրի մէջ յիշված է միայն 44 քառ. սաժ.։

Մի քանի ուրիշ երկրորդական հարցապնդումներից յետոյ, հերթը հասնում է իրաւասու Բաբեանին։

Բաբեանը հարցնում է, թէ ինչու կապալային սեզոնի առիթով արած իր հարցապնդման մասին պատասխան չէ տրվում։ Եթէ վարչութիւնը կը շարունակի խուսափել, նկատում է իրաւասուն, ես ստիպված կը լինեմ միջոցներ ձեռք առնել։

Նախագահ.—Հետաքրքրական է, ինչ միջոցներ...

Բաբեան.—Այդ արդէն իմ գործն է, ի հարկէ, քաղաքային կանոնների հիման վրա։

Վարչութեան անդամ Մ. Ն. Աթաբէգեանը յայտնում է, որ բացատրութիւն է պահանջված գործավար Խախանովից, որը առողջանալուց յետոյ, վարչութիւնը կը զբաղվի այդ հարցով և իր զեկուցումն ու որոշումը կը ներկայացնի դումային։

Նախագահ.—Ուշանալու պատճառն այն էր, որ Մ. Ն. Աթաբէգեան 955 գործ ունէր քննելու և չէր կարողանում հասցնել, այլ ոչ թէ վարչութիւնը խուսափել է պատասխանել հարցապնդմանը։

Լ. Տիգրանեան նկատում է, որ հարցապնդումներն արգելք են լինում օրակարգի խնդիրների քննութեան։ Այդպէս շարունակել անկարելի է, շեշտում է իրաւասուն, որովհետև փոխանակ գործի մենք մեր թանգ ժամանակը սպառում ենք աննշան հարցապնդումների վրա։

Միտկեվիչ և Բաբեան ուզում են առարկել Տիգրանեանին։

Նախագահը առաջ է քշում օրակարգի հարցերը։

Առաջին խնդիրը Քանանովի հարցապնդումն է Մելիք-Ազարեանի նորակառոյց տան առջև էլեքտրաքարշի պաւիլիոն շինելու մասին։

Նախագահը յայտնում է, որ այդ մասին տեղեկութիւն կը տրվի յաջորդ նիստում։

Իրաւ. Մ. Քանանեան.—Է՞լի յետաձգել. սա արդէն չորրորդ տարին է։

Վարչութեան անդամ Մ. Ա. Զաքար զեկուցանում է օրակարգի երկրորդ խնդրի՝ Կուկիայի դաշտի ու Մնացականեան կամուրջի մասին։

Տրված զեկուցումից պարզվում է, որ առաջնի կապալավարձը երկու անգամ աւելացել է այժմ տրված է 6050 րուբլով։ Աւելացել է եւ երկրորդի կապալավարձը. տըրված է 5090 րուբլով։

Երկար թեր ու դէմ առարկութիւններ ծագեցին վարչութեան աշխատանքների բաշխման խնդրի շուրջը։

Վարչութիւնը իր մէջ բաժանել է արդէն պարտականութիւնները, և այժմ ներկայացնում է դումային ի հաստատութիւն։

Ց. Խունունց արտայայտում է վերաստուգիչ յանձնաժողովի կարծիքը մի քանի փոփոխութիւններ մտցնելու մասին, գլխաւորապէս ֆինանսական մասում։

Սուլաբերիձէն առաջարկում է սանիտարական-բժշկական տեսչութիւնը առանձնացնել և քաղ. կանոն. 103-րդ յօդուածի հիման վրա սանիտարական տեսչի ընտրութիւնը վերապահել դումային։

Սուխանեան առաջարկում է յատուկ մասնաժողով ընտրել վարչութեան աշխատանքների բաշխման հարցը պարզելու և ապա լաւ մշակված ներկայացնելու դումային։

Հարցը երկար ու բարակ ծեծելուց յետոյ, որի ժամանակ արտայայտվեցին մի շարք իրաւասուներ, դուման որոշում է ժամանակաւորապէս ընդունել վարչութեան ներկայացրած պարտականութիւնների բաշխման ձևը, և ապա գաղտնի քուէարկութեամբ ընտրել 12 հոգուց բաղկացած մի յատուկ մասնաժողով, որի նպատակը պէտք է լինի կազմակերպել և բաժանել պարտականութիւնները վարչութեան կազմի մէջ։

Ընտրվեցին այդ մասնաժողովի անդամներ՝ Ե. Դոլուխանեան, Ս. Մազմանեան, Ց. Խունունց, Զրէլայէվ, Ա. Ենֆիաջեան, Ալիխանեան, Սուլխանեան, Եւանգուլեան, Ա. Միլեան, Լ. Տիգրանեան, Վեսելովզորով, Տէր-ոէքեան։

Աշխատակից

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

II *)

Հայկական իրականութիւնը միշտ տարօրինակութիւններով լիքն է. եթէ չէք հաւատում, կարդացէք «Մշակի» մէջ Աստրախանից տպված թղթակցութիւնը (№ 57)։

Աստրախանցիք նեցուկ ունենալով Էջմիածինը, որտեղից նոր է վերադարձել նրանց պատգամաւորը, «շահելով նրա տրամադրութիւնը» Աստրախանի օգտին, նորից սիրտ առած՝ վճիռներ կայացրին և ձայների ճընշող մեծամասնութեամբ ընդունեցին յանձնաժողովի դրամական ցուցակը։

Այդ ցուցակից մենք իմացանք, որ աստրախանցիք ի պատասխան Էջմիածնի հարցին թէ՝ ինչ է տալու Աստրախանը, որը ձգտում է անպատճառ թեմական դպրոցը ձեռքից չը թողնել և բացված տեսնել միմիայն Աստրախանում, տալու է իր գրպանից միմիայն 5500 րուբլի, այսինքն եկեղեցիներից 4000 և ազգատախնամ հոգաբարձութիւնից 1500 րուբլի, իսկ միւս գումարը՝ 14,000 րուբլին—աւելի ուղիղ՝ 13,000-ը (որովհետև եկեղեցիներից սպասվող եկամուտը մենք չենք կարող մշտական աղբիւր համարել)—տալու են ի հաշիւ թեմի. ասացէք խնդրեմ. սա տարօրինակութիւն չէ՞։]

Բայց չը պէտք է առանց ուշադրութեան թողնել և այն «չը բացված կտակները». որոնք թեմական դպրոցի օգտին են արված, և այն «խոստումները», որ անում են՝ մեզ համար առ այժմ անյայտ բարեգործները և նրանց «խոշոր» գումարները։

Խոստանալը չէ նշանակում տալ. այսօր ունեմ, խոստանում եմ. վաղը քէֆս կորաւ կամ սնանկացայ, չեմ կարող խոստումս կատարել։

Բայց դառնանք իրականութեանը։ Այսպիսով ուրեմն Աստրախանը «խօսեց». նա տարեկան բիւջէի միայն մի տասներորդ մասն է տալու իր գրպանից, իսկ մնացածը տալու է թեմը։ Ահա գլխաւոր առաւելութիւնը աստրախանցիների, ամբողջ թեմի դէմ։ Առանց ժողով գումարելու ես կարող եմ ասել, որ թեմական դպրոցի Եկատերինոդարում բացման դէպքում Եկատերինոդարը կարող է տալ 10—15 հազար իր գրպանից տարեկան և նոր շէնք դպրոցը տեղաւորելու համար, բայց և այնպէս գըտնում եմ, որ դա բաւական չէ դպրոցը անպատճառ Եկատերինոդարում բացված տեսնելու համար։

Եթէ աստրախանցի բարեգործները ուզում են քաղաքասիրութիւնը առաջ տանել, այն ժամանակ տուէք դրական ապացոյց և որոշեցէք այն գումարը, որ տալու են «խոստումներով» կերակրողները։

Աստրախանի ծխական ժողովը բաւականացել է 19,500 ր. տեղը գտնելով, առանց ցոյց տալու որ դա թեմական դպրոցի բիւջէի եթէ ոչ մի երրորդն է, գոնէ միմիայն կէսն է։ Եկատերինոդարի ծխական դպրոցը մօտ 200 աշակերտով, ուսուցչական չնչին ռոճիկով (900 ր.) տարեկան կլանում է 7—8 հազար սեփական շէնքում, այսինքն տարեկան 10,000 րուբլու բիւջէ ունի. իսկ դուք ուզում էք, որ թեմական դպրոցը, որը ծառայելու է ամբողջ թեմին բաւարարութիւն տալու, կառավարվի 19,500 ր.։

Սակայն դառնանք Էջմիածնին, որի տրամադրութիւնը կարողացել է շահել պ. Աստուածատրեանը։ Գալիս է Աստրախանի ծխական ժողովի պատգամաւորը և, որպէս եռանդոտ մարդ, սկսում է համոզել սուրբ հայրերին, որ դպրոցը բացվի միմիայն Աստրախանում։ Մեզ անյայտ է, թէ ինչպիսի՝ տեղեկութիւններ է տուել պ. Աստուածատրեանը կլիմայի և մանաւանդ աշակերտութեան մասին, որովհետև յարգելի թըղթակից հայր Մկրտումեանը միայն անձուկ կերպով յիշում է, որ այդ երկու կէտերը «լիովին բաւարարեցին սինօդի կազմին», և միայն չէ կարողացել նիւթականի մասին տեղեկութիւն տալ, որովհետև լիազօրված չէր։

Ուզում եմ հաւատալ, որ եթէ Էջմիածնի յարգելի հայրերը, որոնք այնպէս շուտ համոզվեցին, որ այդ երկու կէտերը բաւականացուցիչ բացատրութիւն ստացան, լսէին նիւթականի ցուցակը, հարց կը տային պ. Աստուածատրեանին. «Միթէ միայն 6500 ր. է խոստանում աստրախանցին իր գրպանից թեմական դպրոցի օգտին»։

Էջմիածինը տարօրինակ վերաբերմունք ցոյց տուեց հարցին լուծում տալու համար։

Գալիս է Աստրախանի պատգամաւորը, ինչպէս երևում է առանց լուրջ պատրաստութեան, այլ միայն համոզելու և խնդրելու նպատակով. և ահա սինօդը բաւականանում է, և... կարծես հարցը շուտով կը վճռվի։ Երևակայեցէք, որ վաղը միւս օր թեմի միւս հայաշատ քաղաքները, աւանները, շրջանները կը սկսեն ուղարկել Էջմիածին իրանց պատգամաւորներին, և... Էջմիածինը իւրաքանչիւրին պէտք է լսէ ու խոստանայ...

Դա ցոյց է տալիս, թէ սինօդը որքան հետաքրքրված է հարցը լուրջ վճռելով։

Մենք սպասում էինք, որ սինօդը կը լսէ պատգամաւորին և կը պատասխանէ նրան. «Ձեր կարծիքը և խնդիրը մենք աչքի առաջ կունենանք, բայց ոչ մի պատասխան տալ չենք կարող. մենք պէտք է լսենք ամբողջ թեմի կարծիքը. մենք պէտք է ձեռքի տակ ունենանք փաստացի թւանշաններ. կը պատուիրենք թեմակալ առաջնորդին ժողովներ գումարել, տեղեկութիւններ հաւաքել և ապա թեմական ժողովի միջոցով տալ մեզ վերջնական ցանկութիւնը ամբողջ թեմի. և եթէ այնուամենայնիւ Աստրախանը գերակշռող տեղ բռնէ, իսկ թեմական ժողովը համաձայն կը լինի Աստրախանին, մենք մեր վճիռը կը տանք»։ Ահա, մեր համեստ կարծիքով, այսպէս պէտք է վարվէր սինօդը։

Մենք բողոքում ենք թեմական շահերին դիպչող հարցերը աստրախանցիների և սինօդի հայրերի ընտրած ճանապարհով, ձևով վճռելու եղանակի դէմ։ Եթէ դպրոցը թեմական է կոչվելու, նա պէտք է բացվի համաձայն թեմի վճռի, այլ ոչ թէ մի փոքրիկ, եռանդոտ, բանիմաց աստրախանցի խմբակի վճռի և ցանկութեան համաձայն, սինօդի ձայնակցութեամբ։

Ուզում ենք հաւատալ, որ Էջմիածինը անմիջապէս կարգադրութիւն կանէ, որ թեմակալ առաջնորդը թեմական ժողովներ գումարելու պատուէրը տայ և հրապարակ նետէ այդ լուրջ հարցը, և միայն այն ժամանակ վճռվի վերջնականապէս այդ հարցը։

Իսկ եթէ թեմերը շատացնելու հարցը շուտ վճռվելիք հարց է, ուրեմն Աստրախանի թեմը պէտք է անշուշտ ամենից առաջ բաժանվի երկու կամ երեք թեմերի. այն ժամանակ սպասենք մէկ երկու տարի ևս, թող ապագայ թեմերը իրանց թեմական դպրոցական հարցերը վճռեն։

Յարգելի սինօդականների կարգադրութեանն ենք սպասում։

Ն. Սաթունեան

Եկատերինոդար

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ընթացիկ կեանք

Ցարսկոյէ-Կոլոդցի, 20 մարտի

Թիֆլիսի առաջին կարգի վաճառական Սարգիս Սողոմոնեան Ցարութիւնեանը խոստացել էր մշտապէս տալ տեղիս հայոց աղքատ դպրոցին նպաստ տարեկան 20 ր.։ Դպրոցի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացաւ տեղիս վաճառական Ստեփան Ամիրեանցի միջոցով Ցարութիւնեանի երկու տարվայ նպաստը 40 րուբլի։ Ցանկալի է, որ պ. Ցարութիւնեանը, իր խոստման համաձայն, շարունակէ նպաստ տալ տեղիս դպրոցին։

Տեղիս եկեղեցին և դպրոցը մեծ նեղութիւն են կրում ջրի պակասութիւնից։ Եկեղեցին ունի բաւական մեծ գաւիթ, բայց նա չի մշակվում ջրի պատճառով։ Եկեղեցուց 10 սաժէն հեռու անցնում է ջրմուղ, որը ջուր է տալիս զինւորական հիւանդանոցին և բաղնիքին։ Զինւորական վարչութեան խնդիր ուղարկվեց, խնդրելով թոյլատրել այդ ջրմուղից ճիւղ անցկացնել եկեղեցու բակը։

N. N.

Զանազան լուրեր

Ախալցխա, 17 մարտի

Ամսիս 16-ին Ախալցխայի եղանակները յանկարծ փոխվեցին. առ. ժ. 11-ին սկսեց սաստիկ քամի, այնպէս որ փոշին ամպի պէս կանգնեց։

Հացի գինը փութին ½ կ. պակասեցրին։ Հացթուխները սկսեցին խմոր հաց եփել։ Կազմվեցին ոստիկանական արձանագրութիւններ։

Քաղաքումս փորհարինքի մի քանի դէպքեր եղան։ Զոհերը պատկանում են զանազան ազգութիւններին։

Տեղիս յաջորդ Սահակ վ. Տէր-Միքայէլեանը, ինչպէս լսում ենք, մօտ օրերս մեկնելու է իր վիճակները՝ Ախալքալաք և Ծալկա, ապա և Ջլդըր։ Ներկայ յաջորդը մեր թէ դպրոցական և թէ եկեղեցական գործերը մտցրեց նորմալ դրութեան մէջ, մանաւանդ դպրոցները, որոնց վրա նկատելի աշխատանք է թափում։ Ախալցխայի յաջորդութեան ենթակայ վիճակների դըպրոցները կարիք ունեն հոգածու ու փորձառու հովւի խնամքի, քանի որ նիւթական կողմից անապահով են։ Եռանդուն ու սրտացաւ մի փոխանորդի համար գործելու պարարտ հող կայ այդ ասպարէզում։

Մարութեանների կտակած 25,000 ր. դըրվելու է տեղիս փոխանորդի տրամադրութեան տակ։ Ընտրվեցին Եղիսաբէթեան դպրոցի շինութեան համար հոգաբարձուներ։ Լսում ենք, որ առաջիկայ սեպտեմբերին կը սկսվի վերոյիշեալ դպրոցի շինութեան գործը։

Գերեզմանատան ջրի բերելու գործն էլ մնաց առաջիկայ ժողովին։

Կ. Ա.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Պետերբուրգ, 24 մարտի

Նախագահում է Րոդզեանկօն։

Հերթին «Պրովոդնիկի» վարչութեան ներկայացմամբ գործարանային իշխանութեան ցոյց տուած անփոյթ հսկողութեան խնդիրն է։

Մալինովսկին պնդում է ներկայացված հարցապնդումը ընդունելու վրա։

Զամըսլովսկին կարծում է, որ այն ամենը, ինչ տեղի ունեցաւ ֆաբրիկաներում վերջին օրերս, հետևանք է չարամիտ քիմիական օբստրուկցիայի, որովհետև մի քանի յեղափոխական կազմակերպութիւններ գիտաւորեալ կերպով թունաւորում էին բանւորներին, որպէսզի բանի կերպով հարկադրեն նրանց յարվել գործադուլին (ձայներ ձախից, աղմուկ)։

Խառաստովը բողոքում է Զամըսլովսկիի ասածների դէմ։

Եանուշկեվիչը յայտնում է, որ աշխատաւորականները կողմնակից են հարցապնդումը ընդունելուն։ Անհրաժեշտ է լսել կառավարութեան բացատրութիւնները ըստ հարցապնդման էութեան, որովհետև առևտրի մինիստրութեան՝ Դումային ներկայացրած անորոշ տեղեկութիւնները սոսկ առիթ ծառայեցին, այն իմաստով, որ մամուլի մի մասում և Դումայի ամբիոնից զրպարտիչ ակնարկներ նետվեցին բանւորներին գիտաւորեալ թունաւորելու մասին։

Չխէիձէն.—Պնդելով հարցապնդումը ընդունելու վրա, յայտնում է, որ մինչ այն ժամանակ, քանի Զամըսլովսկիի ասածները չեն հաստատվի փաստերով, նա Զամըսլովսկիին համարում է զրպարտիչ ու պրովոկատոր։

Նախագահը նկատողութիւն է անում Չխէիձէին և առաջարկում է Դումայից արտաքսել նրան երկու նիստից։

148 ձայնով ընդդէմ 47-ի նախագահի առաջարկութիւնը ընդունվում է։

Պուրիշկեվիչը գտնում է, որ խօսք անգամ չէ կարող լինել այն մասին, թէ թունաւորումները պատահական բնաւորութեան են։ «Լաֆէրմ», «Տրէուգօլնիկ» և «Պրովոդնիկ» ֆաբրիկաները սօցիալ-դեմօկրատների շրջաններում համարվում են որոշ չափով սև-հարիւրեակային, նրանց ոչ մի միջոցով չէր կարելի ստիպել գործադուլ անել։ Եւ ահա այստեղ նստածների բարեկամները դիմեցին չարամիտ օբստրուկցիային։

Ուժեղ աղմուկ ձախից, բողոքներ, ձայներ՝ «Հեռացրէք նրան ամբիոնից, մենք թոյլ չենք տայ նրան խօսել, թոյլ չենք տայ, որպէսզի մեզ վիրաւորեն ամբիոնից»։

Նախագահը Պուրիշկեվիչին կարգի է հրաւիրում։

Պուրիշկեվիչը, առարկելով, հրաւիրում է վարվել այնպէս, ինչպէս վարվում էր իշխանութիւնը 80-ական թւականներում հրդեհաձիգների հետ Պետերբուրգում, այսինքն դատել թունաւորողներին պատերազմական դրութեան օրէնքներով և կախել։

Քուէարկութեամբ հարցապնդումն ընդունվում է միաձայն։

Առաջարկութիւն է լինում—նշանակել մի մասնաժողով Պետական Դումայի անդամներից և բանւորական կազմակերպութիւնների ներկայացուցիչներից, ինչպէս նաև մասնագէտներից՝ մասսայական թունաւորման պատճառները պարզելու համար։

Սկօբելևը պաշտպանելով առաջարկութիւնը, գտնում է, որ մասսայական թունաւորումները գործարաններում—այդ մեր սօցիալական օրէնսդրութեան ճգնաժամն է, երբ բանւորները, հիւծված աշխատանքի վատ պայմաններից ու չնչին աշխատավարձից, չեն կարող այլ ևս տանել այն դրութիւնը, որի մէջ հարկ է լինում աշխատել։

Քուէարկութեամբ առաջարկութիւնը մերժվում է։

(Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ն. Ֆ. Ռուդոլֆը մեկնեց Պետերբուրգ, մասնակցելու այնտեղ կայանալիք գիւղատնտեսական կրթութեան վերաբերեալ խորհրդակցութեան, որը կազմելու է երկրագործական դեպարտամենտը իր գըլխաւոր կառավարչի օգնական կոմս Իգնատևի նախագահութեամբ։ Առաջին նիստում քննվելու է տարրական դպրոցների միջոցով գիւղատնտեսական գիտելիքներ տարածելու և կովկասեան դպրոցների մէջ գիւղատնտեսական գիտութիւններ դասաւանդելու հարցը։

◆ Թիֆլիսի նահանգապետը առաջարկել է քաղաքագլխի պաշտօնակատարին, տեղեկութիւններ ներկայացնել իրան, իրաւասու Գալստեանի բողոքի համաձայն, մարտի 10-ին քաղաքային քարտուղարի ընտրութեան անճշդութեան մասին և այն մասին, թէ ինչու քաղաքագլխի պաշտօնակատարը վերցրել է Քանանեանի քուէատուփը այն պատճառով, որովհետև նա դատի է ենթարկված և իրաւունք չունի քուէարկվելու հասարակական պաշտօնի համար, ներկայ դէպքում քաղաքային քարտուղարի պաշտօնի համար։

◆ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Ի. Խատիսեանի առողջական դրութիւնը բաւական լաւ է, այնպէս որ ենթադրվում է, որ Զատկից յետոյ նա կը զբաղվի քաղաքային գործերով։ Այդ պատճառով քաղաքային վարչութիւնը մի քանի կարևոր գործերի վերջնական լուծումը յետաձգում է մինչև Ալ. Խատիսեանի իր պաշտօնի մէջ մտնելը։

◆ Երէկվայ տօնի պատճառով, Թիֆլիսում հրատարակվող ռուսաց լրագիրները այսօր լոյս չեն տեսնի։

◆ Նոր սպանդանոցի բացումը նշանակված է առաջիկայ ապրիլի վերջերին։

◆ Քաղաքային վարկային ընկ. տարեկան ընդհանուր ժողովը նշանակված է առաջիկայ ապրիլի 27-ին։ Բացի տեղեկագրի և նախահաշւի քննութիւնից կայանալու է պաշտօնատար անձանց ընտրութիւն, որոնց թւում և ընկերութեան կառավարչի։

◆ Կովկասում մելիորատիվ համագումար կազմակերպող կոմիտէտը նուէրներ է ստացել համագումարի ծախքերի համար Թիֆլիսի բօրսային կոմիտէտից 50 րուբլի, Թիֆլիսի նահանգի ազնուականութիւնից 350 րուբլի։

◆ Այսօր, մարտի 26-ին, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում տրվելու է մի համերգ՝ յօգուտ երաժշտութեան ուսուցիչ Ռուբէն Տիգրանեանի։ Ցանկալի էր, որ հայ ուսուցչութիւնը, ինչպէս նաև հայ հասարակութիւնը իրանց ներկայութեամբ օգնութեան հասնէին կարիքաւոր հայ ուսուցչին։

◆ Թիֆլիսի գրաքննական առեանի կարգադրութեամբ, մարտի 23-ին, գրաւվեց Թիֆլիսում հրատարակվող «Փիքրի» № 21-ը։

◆ Մակուի սարդար Մուրթուզա Կուլի խան Իգբալի-Սալթան, որ գտնվում էր Թիֆլիսում, մարտի 23-ին, կիրակի օրը մեկնեց Պարսկաստան։ Նրա հետ գնաց և նրա շքախումբը։

◆ Հասարակ. ակումբի մարտի 29-ի երեկոյթը կայանալու է ուրբաթ, մարտի 28-ին։ Երեկոյեան ժամը 5-ից մինչև 8-ը լինելու է մանկական երեկոյթ, իսկ ժամը 9-ից Ե. Սուլթանով մի ռեֆերատ կը կարդայ Անդրկովկասի թուրքերի գրականութեան ժամանակակից դրութեան մասին։ Ռեֆերատից յետոյ կը լինի զրոյց և երաժշտական բաժին։

◆ Մարտի 23-ին, մէջլիսների վարչութեան մէջ III բաժնի լիազօրներ ընտրվեցին՝ Ա. Զ. Արուզով, Ն. Վ. Աբրամեան, Ա. Ի. Ադամիձէ, Ա. Ի. Ալավերդով, Ա. Բ. Ամիրաղեան, Ա. Ս. Ապրիամով, Ս. Ի. Ապրիամով, Մ. Ա. Ցարութիւնեան, Ա. Ա. Վիլվիլեան, Գ. Ի. Կայթմազով, Ա. Ա. Մակարով, Ա. Պ. Մակարով, Ս. Ե. Մատինեան, Ա. Հ. Մեհրաբեան, Վ. Մ. Միքայէլեան, Գ. Դ. Մուրադեան, Մ. Ն. Փարսադանեան, Գ. Բ. Պապով, Ս. Գ. Ռոստոմով, Վ. Ի. Ռուդուկով, Դ. Թամազով, Մ. Ե. Տէրունեան, Ա. Ա. Տէր-Աբրահամեան, Տ. Ս. Տէր-Մարկոսեան, Պ. Գ. Տէր-Սիմէօնեան, Զ. Բ. Ումիկեան, Ա. Մ. Ծատուրեան, Դ. Ա. Շիխինով, Վ. Ն. Եարալեան, Ե. Ս. Մայսուրաձէ, Ա. Մ. Աւետեան, Վ. Մ. Արարատեան։

◆ Շուշեցի մի այրի կին, որի ամուսինը սպանվել է հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Շուշում, իր չորս մանկահասակ երեխաների հետ միասին ներկայումս գտնվում է Թիֆլիսի յետ ընկած փողոցներից մէկում, մի նկուղի մէջ, ծանրված վերին աստիճանի կարօտ դրութեան։ Խեղճ կինը խորթ լինելով մուրացիկ կեանքը՝ յաճախ ամաչում է դիմել բարեսիրտ անձերի օգնութեան, այդ պատճառով էլ ամբողջ ընտանիքը, ինչպէս մեզ տեղեկացնում են, օրերով քաղցած դրութեան մէջ է լինում։ Զատկական օրերը մօտ լինելով, յիշեալ ընտանիքի թշուառ մայրը թախանձագին խնդրում է բարեգործ մարդկանց և հիմնարկութիւններին՝ յիշել և իր ապաբախտ հայրազուրկ որբիկներին, գէթ առժամապէս դադարեցնել նրանց «մայրիկ, հաց, հաց» ամենօրեայ աղիողորմ աղաղակը։ Օգնել ցանկացողները նպաստները կարող են ուղղել «Մշակի» գրասենեակին՝ հասցնելու ըստ պատկանելոյն։

---

*) Տես «Մշակ» № 56.

ԿՈՎԿԱՍ

◆ Գալիցիայից (Աւստրիա) եկած մի խումբ դրամատէրեր ներկայումս Սվանէթում (Գուրիայում) գնում են անտառներ, վիէննական կահ-կարասիներ պատրաստելու համար։ Ինչպէս հաղորդում են, այդ դրամատէրերը մտադրութիւն ունեն Օզուրգէթում գործարան հիմնել, որտեղ փայտեղէնը նախ պէտք է մշակվի, ապա ուղարկվի Աւստրիա։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Ներքին գործերի մինիստր հօֆմէյստեր Ն. Մակլակովը դիմեց նահանգապետներին հետեւեալ հրահանգագրով. «Թագաւոր կայսրը 1914 թ. յունվարի 30-ին տուած Բարձրագոյն ռեսկրիպտով՝ յանուն ֆինանսների մինիստրութեան կառավարչի՝ բարեհաճեց մատնանշել, որ պետական գանձատան բարւոք վիճակը պէտք չէ դնել այնպիսի դրութեան մէջ, որ կախված լինի ազգաբնակութեան հոգեւոր ու տնտեսական ոյժի քայքայումից, այլ պէտք է կախված լինի նրա նիւթական դրութիւնից և ժողովրդական արտադրիչ աշխատանքից։ Որպեսզի կառավարութիւնը կարող լինի աջողութեամբ կատարել յիշեալ ռեսկրիպտի մէջ արտայայտված Բարձրագոյն կամքը, ոստիկանութիւնը պէտք է ձեռք առնէ ամեն միջոցներ՝ կրճատելու ոգելից խմիչքների անչափ գործածութիւնը ժողովրդի մէջ և անդադար ու եռանդով օրինական միջոցներով օգնելու է պատշաճ պաշտօնական անձանց և հաստատութիւններին արբեցողութեան դէմ մաքառելու գործում։ Յայտնելով այդ մասին համապատասխան գործադրութեան համար, հաստատ հաւատում եմ ես, որ Ձեզ ենթակայ ոստիկանական բոլոր պաշտօնեաները գիտակցելով իրանց ծառայութեան պարտականութիւնը ու այդ գործի մեծ կարեւորութիւնը, որ այնպիսի ողորմած ուշադրութեան արժանացաւ Կայսրի կողմից, մշտական արիութեամբ կը նպաստեն գործադրելու տեղերում այն կառավարական ձեռնարկութիւնները, որոնք կը հրատարակվեն համաձայն Բարձրագոյն կամքի ցուցումների։ Հաւատում եմ նոյնպէս, որ ոստիկանական պաշտօնեաները թոյլ չեն տայ այս գործում վարչական ամենադոյզն իսկ դանդաղումն ու հակաճառութիւն միմեանց միջև։ Բոլոր վարչութիւնները պէտք է միանան ներկայ աշխատանքում։ Կայսերական բոլոր սպասաւորների միութիւնը այդ սուրբ գործի համար արագութեամբ կապահովէ նրա աջողութիւնը»։

◆ Գաղթավայրական վարչութիւնը տեղեկացրեց հարաւ-ռուսական շրջանային զեմստվային գաղթավայրական մարմնին, որ այսուհետեւ գաղթականութիւնը դէպի Անդրկովկաս կը թոյլատրվի միմիայն Եւրոպական Ռուսաստանի հարաւային մասի այն գիւղացիներին, որոնք բաւական ապահովված են նիւթապէս և աւելի կամ պակաս չափով ծանօթ են հարաւային բուսականութեան կուլտուրայի հետ։ Կուբանի և Թերեքի շրջանները գաղթի համար փակված են։ Գաղթելու վկայականներ տալիս տեղական իշխանութիւններն առանձին ուշադրութիւն են դարձնելու գաղթողների բարոյական յատկութիւնների վրա։

◆ Մարտի 21-ին Պետերբուրգի իտալական դեսպան մարկիզ Կարլոտի մօտ կայացաւ առաջին բալը, որ աչքի ընկաւ իր շքեղութեամբ։ Հիւրերին դիմաւորում էին դեսպանը և դեսպանատան պաշտօնեաները։ Հիւրերի թւումն էին մինիստրների խորհրդի նախագահ Գորեմիկինը, մինիստրներ Սուխոմլինով, Ռուխլով, Շչէգլովիտով, Կասսո, Տիմաշէվ, Սազօնով, Պետական Խորհրդի նախագահ Ակիմով և այլ պաշտօնական բարձրաստիճան անձեր։ Ներկայ էր դիւանագիտական մարմինը in corpore.

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը շուտով ձեռնարկելու է ճանապարհորդութեան դէպի հարաւ ուսումնական գործի դրութեան հետ ծանօթանալու նպատակով։

◆ «Р. В.»-ի ասելով, մինիստրների խորհրդի նախագահը, նրա հետ խօսակցած անձանց պատմելով, մտադիր չէ հանդէս գալ Տաւրիկեան պալատում մինչև ամարային արձակուրդները։ Այժմ Դուման կը զբաղվի գլխաւորապէս բիւջէով և հերթական օրինագծերով, և ուստի Գորեմիկինը աւելի նպատակայարմար է գտնում փորձել աշխատակցելու Դումայի հետ աշնան նստաշրջանից։ Նա, Պետական Դումայի անդամների ասելով, միանգամայն գոհ է իր ընկեր մինիստրներից։

◆ Պետական Դումայի քահանաների մասնաժողովը վճռեց ձայն տալ աբօրտը պատժելու օգտին։

◆ Պետերբուրգում խօսում են, որ հրաժարվելու է արտաքին գործերի մինիստրի օգնական Նէրատովը, որի տեղ նշանակվելու է Վիէննայի դեսպան Շեբէկօն։

◆ Ներքին գործերի մինիստրի օգնական նշանակված Պլեվէն, ըստ լուրերի, նշանակվելու է պետական քարտուղար։

◆ Կովկասի տեղացիների համար Պետերբուրգում մշակվում է յատուկ դատաբանական խորհրդակցութիւն արդարադատութեան մինիստրութեանը կից։

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԸ

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

—

Ռուսաստանում

Պետական Խորհուրդը, որը ոչ միայն դանդաղեցնում է մեր օրէնսդրութեան ազատ զարգացումը, այլ և յաճախ նոյն իսկ արգելք հանդիսանում երկրի սօցիալական օրէնսդրութեան առաջադիմութեանը, առանձնապէս պահպանողական է կանանց ազատագրութեան հարցերում. բայց նոյն իսկ այդ պայմաններում, մեր վերին պալատը դարձեալ ստիպված է լինում յայտնի զիջողութիւններ անել կեանքի ստիպողական պահանջներին, կնոջ իրաւազուրկ դրութիւնը բարելաւելու համար։ Չնչին են այդ զիջողութիւնները, և նրանք վկայում են միայն տղամարդուց կախեալ կնոջ դրութեան մասին, բայց և այնպէս՝ նրանք նպաստում են կնոջ ազատագրութեան գործին, յայտնի չափով բարելաւելով կնոջ դրութիւնը։

Այսպէս, փետրվարի 4-ին Պետական Դումայում ընդունվեց Պետական Խորհրդի խմբագրութեամբ՝ ամուսինների բաժան բնակութեան օրինագիծը։

Օրինագիծը ձևակերպված է այսպէս.

1) Ամուսնացած կանայք, անկախ նրանց հասակից, իրաւունք ունեն բնակութեան վկայագիր (անցագիր) ստանալու, առանց իրանց ամուսինների թոյլտուութեան։

2) Եթէ կանայք բնակվում են բաժան իրանց ամուսիններից, նրանք կարող են առանց նրանց թոյլտուութեան՝ պայմանագրեր կապել, պետական և մասնաւոր ծառայութեան և կրթական հիմնարկութիւնները մտնել։

3) Ամուսնացած կանանց իրաւունք է տրվում պարտաւորվել մուրհակներով, առանց իրանց ամուսինների համաձայնութեան։

4) Բաժան բնակութիւնը արգելվում է, բացի այն դէպքերից, երբ երևան է գալիս ամուսիններից մէկի հոգեկան հիւանդութիւնը, կնոջ հիւանդութիւնը, որը անհնարին է դարձնում նրա համար ամուսնական կեանքը, անբարոյական վարքը, վայրագ վարմունք, ծեծ, վիրաւորանք և այլն. այդ դէպքերում բաժան բնակութիւնը թոյլատրվում է։

Նախատեսվում է նոյնպէս՝ ամուսինների բաժան ապրելու դէպքում և երեխաների դրութիւնը։

Բոլոր երեխաներին իր մօտ թողնելու իրաւունքը տրվում է անմեղ կողմին. բայց երբ ամուսինների միջև համաձայնութիւն չէ կայանում, դատարանն է որոշում, թէ ում մօտ պէտք է ապրեն անչափահաս երեխաները։

Պետական Խորհրդի խմբագրած այդ օրինագիծը կադետների ծրագրի այն կրճատումն է, որը պահանջում էր, որ կանանց իրաւունք տրվի ծառայութիւն և կրթական հաստատութիւնները մտնել՝ անկախ նրանից, թէ ապրում են նրանք բաժան կամ ամուսինների հետ միասին, և որ կանայք կարող են ընդհանուր անցագրի մէջ ներմուծվել միայն իրանց համաձայնութեամբ։

Յամենայն դէպս, փետրվարի 4-ին Պետական Դումայում ընդունված օրինագիծը կնոջ իրաւական դրութիւնը բարելաւող մի օրէնք է, որը միայն ողջունել կարելի է։

Թէև ռուս կինը de facto մինչև այժմ էլ օգտվում էր այդ իրաւունքներով, որովհետև կեանքը աւելի է առաջ գնացել, քան մեր օրէնսդրութիւնը, բայց օրէնսդրական այդ ակտով արդէն հաստատվում է տիրող դրութիւնը։

Թէև կանանց առաջադէմ կուսակցութեան ակումբը բողոքող բանաձև է ընդունել այդ օրէնքի սահմանափակ ու անկատար լինելու առիթով։

—

Հոլլանդիայում

Ամստերդամում տեղի է ունեցել մի ահագին ցոյց, որին մասնակցել են մօտ 15,000 ֆեմինիստականներ։ Կորտէժը անցնում է գլխաւոր փողոցներով, իսկ վերջում տեղի է ունենում միտինգ։ Խօսում են գլխաւորապէս կանայք, պահանջելով կանանց իրաւունքների լիակատար հաւասարութիւն տղամարդկանց հետ։

Միտինգին հրաւիրված են եղել բոլոր կուսակցութիւնները, մինչ ներկայ են եղել միայն սօցիալիստներն ու առաջադէմ դեմօկրատները։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՈՒԼ ՀԷՅԶԷ

Նորերս Բեռլինում վախճանված Պաուլ Հէյզէն ծնվել էր 1830 թւին։ Առաջին անգամ իբրև բէլլետրիստ հանդէս եկաւ 1851—52 թ. թ.։ Գրական գործունէութեան ընթացս 16 տարիների Պ. Հէյզէի գրչի տակից լոյս տեսան բազմաթիւ գրուածքներ։ Իբրև նովէլլաներ գրող՝ Պ. Հէյզէն առաջին տեղն է գրաւում համաշխարհային գրականութեան մէջ։ Թէև մի քանի քննադատներ դէպի Հէյզէի նովէլլաները վերաբերվել են շատ խիստ։

Պ. Հէյզէն գրել է նաև երեք-չորս խոշոր երկեր, որոնցից «Դարի զաւակները» և «Դրախտում» իր ժամանակին թարգմանվել են ռուսերէն։

Ընդհանուր առմամբ Պ. Հէյզէի ստեղծագործութիւնը ժողովրդականութիւն չէր վայելում Ռուսաստանում։

Իբրև մարդ Հէյզէն իր հայրենիքում վայելում էր ազնիւ ու շիտակ մարդու համբաւ։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՄԵՂ Է ՈՐՊԷՍ ԿՈՆՖԷԿՏ

Սկավուլինը սիրված դեղ է այն բոլորի համար, որոնց առողջութիւնը խանգարված է։ Սկավուլինը կուլ տալը նոյնքան դուրեկան է, որքան և կօնֆէկտը։ Բացի այդ, որովհետև Սկավուլինը բուսական նիւթերից պատրաստված պրէպարատ է, նա ներգործում է դուրեկան կերպով, չէ գրգռում, սրտախառնութիւն չէ առաջացնում, մարմնի ջերմութիւնը չէ բարձրացնում։

ՍԿԱՎՈՒԼԻՆ

Պահանջեցէք միայն
ԳԱԲԼԷՆԻ ՍԿԱՎՈՒԼԻՆԸ
(B. 22732) 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան- առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8, Սեմենօվսկայա փող., № 18 (Վօյօնցովի արձանի մօտ) առանձնապէս հիւանդների համար յարմարեցված բնակարանում։ Բժշկի բնակարան Սեմենօվսկայա, № 16.
(հ.ու.կ.) 804. 100—70

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս, (Ներարկումն 606 եւ 914-ով) միզասեռական, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունե- ($12\frac{1}{2}$—2 ժ. ցերեկվայ։։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.։
Սօլօլակ, Բեբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկեվիչի փող.), տէլէֆօն 11—75.
(հ. կ) 785. 100—58

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտօվսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեքտրօթէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տէլէֆօն № 388.
(ա. օ.) 112. 100—33

ГОЛОВНУЮ БОЛЬ и МИГРЕНЬ
РАДИКАЛЬНО УСТРАНЯЕТЪ
„МИГРЕНО-НЕРВОЗИНЪ"
БЕЗУСЛОВНО ВѢРНОЕ и БЕЗВРЕДНОЕ РАСТИТЕЛЬНОЕ СРЕДСТВО.
ТРЕБОВАТЬ въ АПТЕКАХЪ и АПТ. МАГАЗ. ТОЛЬКО НАСТОЯЩИХЪ ПОРОШКОВЪ съ ПѢТУХОМЪ апт. А. ГОНСЕЦКАГО въ Г. ПЛОЦКѢ по 10 коп. за шт.
ОСТЕРЕГАЙТЕСЬ ПОДДѢЛОКЪ! ФАБР. МАРКА

ՇՆՈՐՀԱԿԱԼ. ՄԻ ՔԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Մեծ. Պ... Թոյլ տուէք անկեղծօրէն շնորհակալութիւն յայտնել Ձեզ Ձեր հրաշագործ գիւտի համար։ Ձեր «ՄԻԳՐԷՆՕ-ՆԷՐՎՕԶԻՆԸ» ազատում է ինձ սարսափելի տանջանքներից... Յարգանքով Ն. Բէրդեաեվ. Նովգորոդ։

Մեծ. Պ... Ձեր «ՄԻԳՐԷՆՕ-ՆԷՐՎՕԶԻՆԸ» դեղափոշին ներկայացաւ ամենահրաշալի դեղը, և կողմնակի երեւոյթներ չէ առաջացնում. այդ պատճառով էլ հաճութեամբ պիտի օգտվեմ նրանից իմ գործունէութեան ընթացքում։ Կամէնեց-Պօդօլսկ. բժ. Վ. Ալէքսանդրովիչ։

Մեծ. Պ... Յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը Ձեր «ՄԻԳՐԷՆՕ-ՆԷՐՎՕԶԻՆԻ» դեղափոշու համար։ Այժմ ինձ միանգամայն առողջ եմ զգում։ Յարգանքով Ի. Ա. Սկվօրցօվ. Ռօստով Դ./Վ.։

Մեծ. Պ... Ձեր «ՄԻԳՐԷՆՕ-ՆԷՐՎՕԶԻՆԸ» դեղափոշին հրաշալի ազդեցութիւն է անում։ Իմ մայրը և ես այդ դեղովն ենք ազատվում մեր սարսափելի հիւանդութիւնից։ Ստօլնից քաղ. Պէլեցկի նահ., Ա. Ի Ժիլեաեվա.

Մեծ. Պ... Պաշտօնակիցներիս և իմ կողմից յայտնում եմ Ձեզ սրտագին շնորհակալութիւն Ձեր հրաշագեղ «ՄԻԳՐԷՆՕ-ՆԷՐՎՕԶԻՆԻ» համար։ Օդէս. I Փոխ. Վարկի Ընկ., Յարգանքով Ս. Գամալէյ։

Մեծ. Պ... Ձեր «ՄԻԳՐԷՆՕ-ՆԷՐՎՕԶԻՆԸ» դեղափոշին ամենալաւ դեղն է համարվում։ Դ-ր Ա. Գ. Վարցէն, Վարշավա։

Փոքրիկ փաթեթներով ուղ. է գտնել. Апт. Гонсецкій, г. Плоцкъ, с/д.
(B. 54167) 11—9

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
ՏՆԵՐ

Նիկօլայեվսկայա, Չերքէզովսկայա և Պեսկօվսկայա փողոցների վրա, Դիդուբէում, Մետեխի զառիվայրի վրա մի խանութ, և մի ամարանոց Կօջօրում։ Տեղեկանալ Գօլովին. պր. «Օրիանտ» հիւրանոցում, № 18, առ. ժամը 10—2-ը և երեկ. ժամը 4—6-ը։
254. 5—5

Փականա-մեխանիկակ.
= ԱՐՀԵՍՏԱՆՈՑ =
ՉԱՅՐՎՈՂ
ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ
= ՎԷՐՆԷՐ ՊՖԷՅԼ =
Վօկզալնայա փ. № 3.
(օ.մ.) 100. 100—19

I ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ
ՊԱՏՐԱՍՏԻ
ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆԻ
Նիկօլայեվսկի կամուրջ, 20—30

Սրանով յայտարարում ենք Թիֆլիսի յարգելի հասարակութեան, որ ստացված է տղամարդկանց, կանանց եւ երեխաների բազմազան հագուստեղէն, ամենավերջին տարազի։

Որպէս զի հետեւեալ սեզօնին չը մնայ խանութի ապրանքը, մենք նշանակել ենք

ԽՈՇՈՐ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ 60% ԶԵՂՉՈՎ

Խանութում գտնվող բոլոր ապրանքների գները նշանակված են կապոյտ մատիտով և ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ։ Էժան վաճառքի ժամանակ գնված ապրանքները չեն վերադարձվում։

Մնում եմ յարգանքներով Փիրմայի կարգադրիչ՝ Ա. ՂԱԴԱԿՉԻԵԱՆ
(ու. կ. հ.) 255. 10—3

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ
հետեւեալ աշխատութիւնները՝

1) «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ» (էջ 6000, 25 հատոր) գինը 50 ր., հատորը 2 ր.։
2) «ՍԱՍՄԱՑ ԾՌԵՐԻ ՅՈՒՇԻԿՆԵՐ» (500 էջ) գինը 2 ր.։
3) «ԳՐՈՂԻ ՎԻՃԱԿԸ» (պօէմա) գինը 1 ր.։
4) ԾՕՃԿԱՆՆԵՑԻ ԽՈՒԴԻ» «Տարազից» (պատմ. պօէմ) գինը 1 ր.։
5) ԳԻՒՂԻ ՀԵՐՈՍԸ» «Տարազից» (պատմ. պօէմ) գինը 1 ր.։

Հեղինակի հասցէն՝ Эривань, Астафьевская № 42, магазинъ Михаила Антонянцъ, переслать сел. Башкендъ, старш. учителю Григорію Баласанянъ. (օ.մ.) 271. 10—1

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ եւ ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԵԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
(Տեսական եւ գործնական)

Կովկասեան Շերամապահական Կայարանին կից ներկայ ապրիլի 15-ից բացվում են յիշեալ դասընթացքները, որ կը շարունակվեն մինչև յունիսի 1-ը։ Դասընթացքների ունկնդիրները ուսման վարձ չեն վճարում։ Ունկնդրել ցանկացողները կարող են ստորագրվել Կայարանի գրասենեակում ամեն օր, բացի տօն օրերից, առ. ժ. 11-ից մինչև ցեր. ժ. 1-ը։ Տեղեկութիւնների համար անձամբ կամ գրաւոր կարելի է դիմել Կայարանին։ 248. 8—3

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

Սրանով խնդրում եմ հայ հեղինակներին, որոնք «Հայ գրականութիւն և Հայ հեղինակներ» աշխատութեանս համար դեռ չեն ուղարկել իրանց լուսանկարները, կենսագրականները և աշխատութիւններից մի-մի օրինակ, շտապեն ուղարկել այս հասցէով՝ Эривань, Астафьевская ул. № 42, магазинъ Антонянцъ, переслать сел. Башкендъ, старш. учителю Григорію Баласанянъ.

Յայտնում եմ ի գիտութիւն նաև, որ այդ աշխատութիւնը բաղկացած է վեց հազար էջերից և 25 հատորներից և ընդգրկում է ռուսահայոց և թիւրքահայոց գրականութիւնից ամբողջական սիստեմատիկ պատմութիւնը, արդիւնք 27 երկար ու ձիգ տարիների քրտնաջան, անդուլ մանրազնին քննադատական ուսումնասիրող աշխատանքի։

Պարբերաբար լոյս կը տեսնի հատորներով, պատկերազարդ ու շքեղ։ Կլիշէները պատրաստվում են արտասահմանում։ ԳՐ. ԲԱԼԱՍԱՆԵԱՆ 276. 1—1

ՄԱՐՄԱՐԷ-ՄՕԶԱՅԻԿ և ԱՐՁԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
Բ. Պ. ՎԻԼԼԱՅԻ
Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 63, սեփական տ.։ Տէլէֆօն 6—80.
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ
մարմարեայ, քարէ եւ մօզայիկ աշխատանքների համար։
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
պատրաստի արձաններ լաբրադորից և տեղական կարրաբեան մարմարից։
Ծեփումն շինութիւնների ֆասադի-արհեստական քարով։
(հ.ու.կ.) 271. 10—1

ՊԱՏՐԱՍՏ Է ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Սուրխաթեանի
ԿԻՆԸ ԵՒ ՆՐԱ ԱՊԱԳԱՆ
(Սօցիալ-տնտեսական էտիւդ)

Բովանդակութիւն
I Նախաբան հեղինակի։ Կանանց ազատագրութեան հարցը և նրա հակառակորդները. Տօլստօյ, Նից Շօպէնհաուէր, Վէյնինգեր։ Եզրափակումն։
II Կանանց հարցը իբրև սօցիալական բարդ երևոյթ։ Նրա ուսումնասիրութիւնը հասարակական-տնտեսական տեսակէտից։ Հասարակութիւն և միջավայրի ազդեցութիւնը։
III Կանանց հարցի նկատմամբ տիրող կարծիքը մեզանում։ Հարցի պատմական անցեալը։ Նախապատմական ընդհանուր դրութիւն և բաժանումն շրջանների։ Կինը նախապատմական և պատմական անցեալում ըստ Մորգանի, Էնգէլսի, Բախօֆէնի, Բէբէլի։ Կնոջ դրութիւնը ըստ Աստուածաշնչի, քրիստոնէական վարդապետութեան, Թէօկրատիայի, Մխիթար Գօշի դատաստանագրքի և ռուսաց «Տնարարի»։ Փակագծի մէջ. պաշտօնական եկեղեցին և կինը և հայկական կրօնական ոսկէդարը։ Քրիստոնէական ռէակցիան։
IV Միջին դարեր։ Տնտեսական ընդհանուր դրութիւն։ Jus primae noctis (առաջին գիշերվայ իրաւունք)։ Վերածնութիւն։ Անհատի ազատագրումը սխօլաստիկայից։ Կինը գրականութեան և արուեստի մէջ։ Ասկետիզմ և Լիւտեր։ Թոմաս Մօրուս։
V Հին կարգերը։ Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը։ Կանանց կօլլեկտիվ մասնակցութիւնը այդ յեղաշրջման մէջ։ Հետևանքները։
VI Կինը ներկայ պայմաններում։ Ամուսնութիւն։ Անառակութիւն և մայրականութիւն։ Կինը ընտանեկան, հասարակական և պետական կեանքում։ Կնոջ մասնակցութիւնը տնտեսական կեանքում։
VII Տնտեսական յեղաշրջումն։ Նոր հասարակութիւնը։ Զարգացման նոր շրջան։ Գիտութիւնն ու գեղարուեստը նոր հասարակութեան մէջ։ Ապագայի հեռանկարը։
VIII Մալթուզեան սարսափը մարդկութեան գերաճման առջև։ Առաջատւութիւնների (պրօգրէսսիաների) ողբերգական ձևակերպութիւնը այդ գերաճման և ապրելու միջոցների նուազման նկատմամբ։ Քիմիական սինթ և տեխնիկայի կատարելութիւն։ Մարդկային ցեղի աճման հաւանական ապագան։
IX Կինը որպէս սեռ։ Կնոջ ֆիզիօլոգիան և մտաւոր կարողութիւնը։ Տաղանդ և հանճար։ Կնոջ իմաստն էութիւնը։ Ապագան։
(ու.հ.) 250. 3—2

ՆՐԱՆՑ, ՈՐՈՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՅԱՐՄԱՐ ԵՒ ԷԺԱՆ ԳՆԱԼ
ԱՄԵՐԻԿԱ,
խորհուրդ ենք տալիս գնալ ՀԱՄԲՈՒՐԳ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳԾԻ շոգենաւերով։ Իւրաքանչիւր անձն, ով դիմում է մեզ, ձրիաբար ստանում է մանրամասն տեղեկութիւններ գլխաւոր գործակալութիւնից՝ С. Вольффъ мл. ГАМБУРГЪ, Германія. S. Wolff jr.
HAMBURG. Glockengiesserwall 13.
P. S. Խնդրում ենք գրել մեզ ռուսերէն։ 106. 25—14
(հ. շ.)

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный